5. ա. Թ. 35ա — 35աբ՝ «Կանոնք Տեառն Փիլիպպոսի առաքելոյ: Յաղագս քառասունսն ունելոյ՝ երիս միանգամ արժան է եւ այլ ոչ հրամայեմք . . .» եւն.: Վջ.՝ «Իսկ եթէ յաղագս աղքատութեան պակասեսցէ քան զխը [= զքառասունը], երկդրամեան հաւանութեամբ քահանային այժան է»:

բ. Թ. 35աբ — 36ա՝ «Նորին կանոն գլուխ ը.»: Կանոնների չարընթաց հմր.՝ ճծդ — ճկ: Սկ.՝ «Կին եթէ ամուլ դիպեսցի անգիտաբար ամուսնան|ալով, անմեղք են, մի՛ որոչես|ցին. իսկ զոր յայլոց արանց փորձեալ իցէ եւ յետոյ այլք առնուն . . .» եւն.: Վջ.՝ «. . . դնելով սահմանական կարգացն, նզովեալ եղիցի»:

6. Թ. 36ա — 39ա՝ առաքեալներին հետեւող հայրերի կանոնները:

ա. Թ. 36ա — 36բա՝ «Կանոնք հարանց հետեւող|աց յետ առաքելոյ, գլուխ ունի իդ . . .» եւն.: Ցանկ:

բ. Թ. 36բա — 39ա՝ «Գլուխք կանոնիս հարանց սրբոց իդ.» չարընթաց հմր.՝ ճկա — ճձդ: Սկ.՝ «ա. Եթէ հեղձու|ցանէ ոք զտղայ իբրեւ զխեղ կամ ի շնութեան զայն կամաւ ար|արեալ, փոխանակ մեռցի, զի որպէս ոչ է հնար ի վերայ կա|ցուցանել . . .» եւն.: Վջ.՝ «Մա|կաբայեցիք Սիրաք եւ կալ|ջիկ [=կալջիք] առ ի խրատել զմանկու|նս ձեր»:

7. Թ. 39ա — 43բբ՝ Անկիւրիայի ժողովի կանոնները:

Հմմտ. R. B. Backham, The text of the canons of Ancyra [Studia biblica et ecclesiastica III p. 139—216]. I. B. Pitra, Juris ecclesiastici Graecorum historia et monumenta I, Romae 1864, p. 441—448. C. J. Hefele, Conciliengeschichte² 1873, I 219—251. Analecta sacra Spicilegio Solesmensi parata ed. I. B. Pitra, IV, Paris 1883, p. 221—223, 449—451:

ա. Թ. 39ա — 39բա՝ «Անկիւրիայ կանոնիս գլուխք ի.»: Ցանկ:

բ. Թ. 39բա — 39բբ Ներածութիւն՝ «Այս կանոնքս նախ են քան որ կարգեցան ի Նիկիայ: Քանզի որ ի Նիկիայ կարգեցան յառաջագո|յն կարգեցան վասն սաստիկ եւ մեծ ժո|ղովոյն ի Նիկիայ քաղաք. քանիք ուստէք ժողովեցան յԱնկուրիայ, նոցին [անուա]մբ կարգեալ են ի գրի ասա. Մարկեղոս՝ յԱնկիւրէ. Ուր|տալիոս՝ յԱնտիոքէ. Բարսեղ եւս յԱմասիէ. Փաղագղփոս յՈւղիպաւլսէ, եւ Ստորիղոս ի Նիկոմիդէ. Պետրոս ի Կոնէ [=Իկոնէ], Նունէքսիոս ի Լաւոդիկէ. Սերգիանոս յԱնտի[ոքէ] Պիսիդացւոց: Արդ գումար|ել յԱնկուրիայ միահամուռ ժողովելոցն ուղղափառացն առ ի քակտումն Լիկիանու ամբարշտութեան, որ ի զոհս կռոց բռնադատէր զերիցունս: Կարգեցին ըստ յանցանացն սահման ապաշ|խարութեան ի գլուխ կա|նոն, որ են այս»:

գ. Թ. 39բբ — 43գբ՝ կանոններ, չարընթաց հմր.՝ ճձե — մդ: Սկ.՝ «Վասն երիցանց որք ի բռ|նութենէ հեթանոսաց մին|չեւ ի տանջանս ածեալ եւ մահ սպառնալ եւ նոքա ան|երկիւղին զոհեցին . . .» եւն.: Վջ.՝ «Բայց, օծումն քահանայութեան մի՛ մերձեսցին, այլ

վասն կուսանաց որ մերձեսցին առ ոմա|նս իբրեւ քեռք, զայնպիս|ին խափանեցաք զի մի՛ եւս լինիցին »։

8. Թ. 43բբ — 49աբ՝ Նիկիական ժողովի կանոնները։

Հմմտ. I. B. Pitra, Juris ecclesiastici Graecorum historia et monumenta, I, Romae 1864, p. 427—437. Hefele, Conciliengeschichte², 1873, I, 376—431. Analecta sacra Specilegio Solesmensi parata ed. I. B. Pitra, IV, Paris 1883, p. 224—233, 451—458։

ա. Թ. 43բբ—44աա՝ ցանկ։ Վնգ.՝ «Դնի կանոնս Նիկիակա|նք գլուխս ի.»։

բ. Թ. 44աբ — 44բա՝ ներածութեւն։ Վնգ.ի սկիզբն է՝ «Կանոնք եւ սահմանք որ եղան ի սուրբ կաթուղիկէ եկեղեցւոջ . . .» Հետեւեալը պակաս է. տե՛ս վերոյիշեալ տեղեկութիւնը։ Վջ.՝ «. . . եւս . . . . բութիւն . . . . գլխաւ . . . . դաք առաջնորդք աւրէնք ուսոյցք կար|գի ժողովրդեանն յժը եպիսկոպոսք, որով լուացան սրբեցին ի նե|խեալ եւ ի փտեալ վիրացն եւ թե|թեւացուցին ի ծանրաբեռն մեղաց ի ձեռն ապաշխարութեան բազմադիմի եւ ազգի ազ|գի մեղացն գործելոցն »։

գ. Թ. 44բա — 48բա՝ կանոններ, շարընթաց հմր.՝ մե — միե։ Սկ.՝ «Վասն այնոցիկ ոյք կարի|ցեն համաւք զերկրաւ|որիս անդամոց . . .» եւն.։ Վջ.՝ «. . . պահել զկարգն, զոր ինչ եդ սուրբ ժողովն. զաղաւթսն մատուս|ցեն Տեառն ամենայն երկիր »։

դ. Թ. 48բա — 49աբ՝ «Կոստանդիանոսի թագաւորի առ եպիսկոպոսս եւ առ ժողովուրդս։ Զի չարաց եւ ամբարշտ|ութեանց լծակից եղեւ [յ]Արի|ոս, յիրաւի զնոյն պատուհաս նոցին անարգանաւք կրեսցէ, որպէս եւ այժմ Պորփիւր, որ ասուածապա|շտութեան թշնամին եւ աւրէ|նսդրութեան անօրէնութեամբ վասն պաշտաւնէից հաստատեաց, ըստ արժանի գիւտի զ[հ]ատու|ցումն [հմմտ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձերագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա 1895, եջ 269] չարեաց իւրոց եւ ա|յնչափ եւս զի նախատելի իցէ, եւս որ գալոց ժամանակքն իցեն զի առաւելապէս եւս լիցի չա|րաչար եւ հայհոյեալ կռփօք եւ ապահանեսցին, որ ի նմա|նէ ամբարշտութեան աւրէնս|դրութիւն։ Այսպէս եւ կան ո|մանք ոյք հաւասար են կա|մաց նորա, զի Մանէացի կոչին, զի ումէք բարուց ելեալ են զնոցին եւ զանուանս ունին եւ վասն այսորիկ, թէ առ ումէք գիրք Արիոսի կեցեալ իցէ եւ գտանիցէ զայնպիսին, հր|ով այրեսցեն, զի ոչ միայն վարդապետութիւն նորա ապահանեալ կորիցէ, այլ եւ զի ամենեւին յիշատակ նորա մի՛ գտանիցէ. այլ զա|յս յայտնապէս հրաման տամ, զի թէ առ ումէք գիրք (յ)Արիոսի եղեալ կամ կար|դացեալ իցէ եւ տեսանիցի առ

ումէք եւ կամ թագոյց եւ ոչ առ ետեղի կրակ մերձե|ցոյց եւ կամ ոչ վատնեաց այրելով, այնպիսին մահու մեռցի, ապայ թէ ի նմին ժամանակի այլք եւս գտցեն, պատիժ ա|յս լիցի գլուխ, զոր մտացին նոյնպէս վաղջանեսցեն ի կենաց իւրեանց։ Գլուխ հաւատոյն ժողովուն Նիկիայ, յիշխանութիւն Պօղովնի եւ Յուլիանոսի փա|ռաւորաց՝ եւ լուսաւորաց յամաց յԱղէկսանդրի ոլզ. յա|մսեանն մարերի, իբրեւ ժթ. էր ամսոյն, յառաջ քան զ ժգ-ն կաղանդին յունվարի [ի] Նիկիայ մայրաքաղաքացն Բիւ|թանացւոց եդաւ հաւատս։ Հաւատամք ի մի Աստուած հայր։ Այս են հաւատք զոր եդին սուրբ հայրքն յառաջ վասն Ա|րիոսի հայհոյութեանն յասե|լն թէ արարած է որդին Աստուծոյ եւ վասն ամենայն հերձուածողացն Սաբէլի, Փոտիանոսի եւ Պօ|ղոսի Սամաստացոյն, եւ Մա|նէացոյ եւ Վաղենտինացւոց եւ Մարկինացոց եւ վասն ամենայն հեր|ձուածողացն որք յարեան ի վերայ կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցոյ, զորս դատապարտեցին ի Նիկիայ քաղաքին, իբրեւ ժողովեալ էին եպիսկոպոսք յծը., որոց անու|անք ըստ իւրաքանչիւր ի|շխանութեան գրեալ է, որ չէ դժուար յայ(յ)տնել »։

9. Թ. 49բա — 53բբ՝ Նիկիայի եւ ուրիշ ժողովների, օրինակ Անկիւրիայի, Նէոկեսարիայի, Կոստանդնուպօլսի եւ Եփեսոսի որոշումների մի խառնուրդ։ Կանոնների շարընթաց հմր.՝ միզ — ժլթ., Վնգ.՝ «Կանոնք երկրորդ Նիկիա|կանք, զոր եդին յժը եպիսկոպոսքն Կրկնաբանեալ կարճ ի կարճոյ»։ Սկ.՝ «Ոչ է պարտ զկրճատե|ալն եւ զներքինիս արարեալ զինքեա|նս ի վիճակի քահ|անայութեան յառաջ ածել։ Ոչ է պարտ զհեթանոսաց . . .» եւն.։ Վջ.՝ «Իսկ կատարիչք սահմանի կա|նոնացս աւրհնեալք եղիցին »։

10. Թ. 54աա — 55աբ՝ Սբ. Գրիգորի կանոնները։ Շարընթաց հմր.՝ յխ — յկթ։

Հմմտ. Աբէլ Մխիթարեան, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք, Վաղարշապատ 1874, եջ 20—24։ Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, եջ 269—270։

ա. Թ. «Կանոնք սրբոյն Գրիգորի առաքելոյ Հայոց, գլ|ուխ լ.։ Սկ.՝ «Քահանայ որ ի մեղս զառածեալ է, ժ. ամ ապա|շխարեսցէ ջեր|մեռանդ սրտիւ . . .» եւն։ Վջ.՝ «. . . եւ եպիսկոպոսն տե|սցէ զվարսն եւ որպէս կամի մա|րդասիրեսցէ »։

11. Թ. 55աբ — 57աա՝ Աթանասի կանոնները։

Հմմտ. I. B. Pitra, Juris ecclesiastici Graecorum historiae et monumenta,

I, Romae 1864, p. 630—643. [Responsa canonica Timothei Alexandriae episcopi և Alia ejusdem Timothei diversa capitula]։

ա. Թ. 55աբ — 57աա՝ «Կանոնք Ա֊թանասի, գ|լուխք ձէ»։ Ցանկ։

բ. Թ. 57աա — 57աբ՝ ներածուԹիւն՝ «Ի ժամանակին յայնմիկ եբեւեցաւ այր մի Գորգիոս անուն արիոս [= արիանոս] ի Կապադո|կիայ, եւ հաւեալ յԱղէկսանդրիայ չիմԹէը եւ չա|ԹԷը գ֊քազաքն եւ անաւրէն իշխանք քաղաքին, որ մեր|ժեալ է յեկեղեցոյ երանելին Ա֊թանաս, ձեռնտու լինէին յաղանդոյն եւ յարուցեալ ամբոխ սասիկ ի վերայ սրբոյն Ա֊թանասի հա|լածական առնէին ի հայր|ապետական աԹոռոյն. սակայն մեծ մասն քազաքին գիմադարձ լինէին աղանդոյն։ Իսկ ա|մբարիշտ Գորգիոս մեծա|մեծ իշխանաւն դասու ժո|ղովեալ ի հաչակաւոր քազաքն Սեւեւկիայ գհայոց|ԱԹին Արիոսի հաստատէը [= հաստատէը]։ Իսկ երանելին Ա֊թանաս յորդաբուխ արտասու|աւք գոչէը առ Աստուած ա|ապարաԹեամբ սրբոյ ճգնա|ւորաց եւ բազում միայնա|կեաց, որոց ի միջի բնա|կէը տուրն եւ վաղվաղակի բառնայր ի միջոյ։ Իսկ տուրն Ա֊թանաս գանդայր յա|Ծոան իւր եւ լուսաւոր վա|ղդապետաԹեամբն իւրով ածէը զմոլորեալսն ի հաւա|տոյ ճշմարտաԹիւնն, աւանդելով եկեղեցւոյ զբանս պլատանիս հարցմ֊ան եւ պատասխանական»։

գ. Թ. 57բա — 67բբ՝ «Բանկ [= Բանք] կանոնականք։ ա. Եթէ մանուկ երախայ կամաբեալ իցէ եւ գիպիցի, Թէ յորժամ պատարագն մատուցանի, եւ անզիա|անալով հաղորդեսցի, գ֊ինչ պարտ իցէ առնել վասն նորա։ Պատասխանի։ Մկրտեալ պարտ է ֆ [= որպէս] կոչեցեալ [յ]Աստուծոյ» եւն.։ Վջ.՝ «... իշխանաւԹիւն լիցի ի վերայ կամաց իւրոց անայր մնալոյ. եւ սայ Թէ ոչ ունիցի ժոյժ, ինքն գիտասցէ գ֊ինչ կամիցի արասցէ»։ ՇարընԹաց հմր. յկԹ — նծգ։

12. Թ. 67բբ — 70աբ՝ Երուսաղէմի Մակար հայրապետի վրԹաներն եւ Հայերին ուղղած կանոնական ԹուղԹը։ Կանոնների չարընԹաց հմր.՝ նծգ — նկգ։

Հմմտ. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 270—272։ Տիրք ԹղԹոց, Թիֆլ. 1901, էջ 407—412։

ա. Թ. 67բբ՝ ներածուԹիւն՝ «Այլ վասն երգման առեմ քեզ քահանայ, [անդ երգելոյ՝ ուր կար|ճումն մնգաց է եւ կարի կա|րիք իցեն եւ վասն իցէ յար|դար[ա]ԹիւԹ եւ զայն արդար երգնուցու զի քահանայից ամենեւ|ին չէ պարտ երգնուլ»։

բ. Թ. 67բբ — 69բբ՝ կանոններ։ Սկ.՝ «Հարցումն Թէ արժան իցէ տարհատագից մկրտուԹիւն առնել կատարեալ իցէ խորհուրդն, զի-

տուԹիւն լիցի քրիստոսասէր եղբայր|ուԹեան ձերոյ, զի եպիսկոպոսաց եւ քահանայից միայն է իշխանուԹիւնս այս եւ տարհատագի .... » եւն.։ — Թ. 68բբ եւն.՝ «Ես Մա|կարիոս, արքեպիսկոպոս տուրբ քա|ղաքիս Երուսաղէմի, աւանդեմ զկա|նոնադրուԹիւնս այս ձեզ ու|սեալ առաքելոց պատմո|Թեանց եւ աւանդուԹեամբ հարցն առ մեզ հաստատեալ ...» եւն.։ Վջ.՝ «... զի մի ընդ միմեանս ելանելով եղծցին կա|րգն, այլ իւրաքանչիւր կայ|անի անարատ մնասցէ»։

դ. Թ. 69բբ — 70աբ՝ վերջաբան՝ «Զայս աւանդեմ ձեզ պա|տուիրան հաւատոյ եւ կա|րգ եկեղեցւոյ ըստ ինդրոյ տալ աղաչանաց ձերոց. եւ նզովեմք ի վերայ այսոցիկ զա|յլաձեւսն խորհեցեալս. զի միմեանց ընկալեալ ձեռն|ադրուԹեամբ զչնորհն՝ ոչ բն|բնմբ պակասուԹիւն եւ միա|պատիս ոչ իրաւունս վա|րկանիմք զկարգեալսն ուղղապէս եկեղեցւոյ, եւ զիա|ռամոլ անձինս կշտամբեմք, որք խորհին հակառակ, որպէս պատմեալ եղեւ մեզ զՏուբա [= զՏուբգեա] Բասանու եւ Բագրեւ|անդա եպիսկոպոսէն, [ո]ր սակաւ|աք ընդ արքեպիսկոպոսին միա|բանեալ է եւ զարձեալ խղճեալ, արդ եւ այլ եւս յանդգնագոյնս խորհի՝ եպիսկոպոս միայն աԹոռաւ եւ ընդ արքեպիսկոպոսին ինքեամբ անձին տա պատիւ, զոր չէ արժան ընդունել. զի ոչ հայրքն աւանդեցին այնպիսի ինչ հակառակուԹիւնս յեկեղեցիս մուծանել եւ անվայելուչ համարել հաւատոյ մինչեւ կոչմամբ ի պատիւ աԹոռոյն ժամանակէ։ Եւ արդ պարտ է զայն պահին քաղցրուԹեամբ ի հր|նազանդուԹիւն կոչել, եւ եթէ ի նոյնս մնասցէ խորչել իբրեւ յաւարէ։ Ողջոյն տան ձեզ աԹեւնայի և|կեղեցիս։ Ողջոյն լերուք ի Տէրն հաստատուն հաւատով»։

13. Թ. 70աբ—71աա՝ Կոստանդնուպօլսի երկրորդ ժողովի կանոնները։

Հմմտ. I. B. Pitra, Juris ecclesiastici Graecorum historia et monumenta, I, Romae 1864, p. 507—512. C. I. Hefele, Conciliengeschichte², 1873, II p. 14—28։

ա. Թ. 70աբ 4—14՝ ցանկ՝ «Կոստանդինուպաւլսի տուրբ ժողովոյն եւ կանոնին գլուխ գ։ ա. Յաղագս զնիկիական հաւատոյ հաստատուն պահել։ բ. Յաղագս երԹալ եպիսկոպոսին գիւրմէ վիճակէն յայլ եւ չը|փոխել։ գ՝ Յաղագս լուծանելոյ զՄաքսիմոս, եւ որք ի նմանէ ձեռնադրեալք են»։

բ. Թ. 70աբ 15—70բա՝ ներածուԹիւն՝ «Յետ որոյ բազում աւ|ուրց Թագաւորութեանց մեծի Թէոդո|սի աստուածասէր Թագաւորի եբեւեցաւ այր մի Մակեդոն անուն, որ հայհոյէը զՀոգին տուրբ,

եւ ոչ ի Հաւր եւ Որդոյ յէ|ութենէ ասէր, այլ աւտար ե|զութենէ. վասն որոյ ժողովին ի Կոստանդինուպօլիս ճծ. եպիսկոպոսք դատապարտեցին զնայ եւ հոգէ մարտ կոչե|ցին»։

գ. Թ. 70բա — 71աա՝ կանոններ, չարընթաց հմր.՝ նկե — նկէ։ Սկ.՝ «Եւ սահմանեցին բանս գլուխս գ։ Ոչ խոտորել զհաւա|տս սուրբ հարցն, որք ի Նիկիայ ժողովեցան» եւն.։ Վջ.՝ «...եւ ոչ, որք ի նմանէ ձեռ|նադրեցան, յոր եւ իցէ յաստի|ճան վիճակի. ամենայն որ ինչ ի նայ եւ որ նովաւ եղեն ան|հաստատուն եղեալ»։

14. Թ. 71աա — 74բբ՝ Գրիգոր Նազիանզացու կանոնները ուղղափառ հաւատոյ մասին։ Շարընթաց հմր.՝ նկը — նձթ։

Հմմտ. Գար. Զարպհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վեն. 1889, էջ 355։

Վնգ.՝ «Սահմանք կանոնադր|ութեան երանելոյն Գրիգորի Աստուածաբանի Անձիանձու եպիսկոպոսին՝ յաղագս ուղղափ|առ հաւատոյ, իբ.»։ Սկ.՝ «Աշակերտեալք սրբու|թեան հաւատոյ, դաւ|անողք սուրբ ուխտի եւ քարոզիչք ճշմարտութեան, որք զբանին զիջումն ուղղա|փառութեամբ...» եւն.։ Վջ.՝ «...իսկ խոհակերքն միմեա|նց արուամոլքն հեռասցին ի միմեանց տարաբնակութեամբ, զի մի արմատ դառնութեան ի վեր երեւեալ»։

15. Թ. 74բբ — 82բ՝ Բարսեղ Կեսարացու գիրք կանոնական առ Ակակիոս։

Հմմտ. Գար. Զարպհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ 1889, էջ 339։

ա. Թ. 74բբ — 75բբ՝ ցանկ։ Վնգ.՝ «Կանոնք մեծի սուրբ հաւ|րն եւ տիեզերալոյս վարդապետի Բարսղի»։

բ. Թ. 75բբ — 82բա՝ կանոններ, չարընթաց հմր.՝ նկ — չխէ։ Վնգ.՝ «Գիր կանոնական մեծի եւ քաջ գիտնականի երանելոյն Բարսղի եպիսկոպոսապետի. բան առ սուրբն Ակակիոս, գլուխ ծ»։ Սկ.՝ «Արտաքսեալք յեկե|ղեցոյ ոչ ամենայնքն հերձուածո|ղք ասեն, այլ զկէսս հերձուա|ծողս կոչեցին միայն, եւ այլսն առանձինն ժողովարարս. զի աղանդաւորք այնոքիկ ասին, որ ամենեւին ի բաց որողեալք են եւ աւտարա|ցեալք յուղիղ հաւատոյ...» եւն.։ Վջ.՝ «....նոյնպես եւ սայ ո|րոչեսցի յեկեղեցոյ եւ յեղ|բայրութեանց բ. չաբաթս մի|նչեւ ուղղեսցէ զինքն»։

16. Թ. 82բա — 83աբ՝ Բարսեղ Կեսարացու գիրք կանոնական առ Դիոդորոս։ Կանոնների չարընթաց հմր.՝ չխը։

Հմմտ. Գար. Զարպհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ 1889, էջ 339. I. B. Pitra, Juris ecclesiastici Graecorum historia et monumenta, I, Romae 1864, p. 602 seq.։

Վնգ.՝ «Դարձեալ սրբոյն Բարսղի գիր կանոնական առ քահանայ Դիոթորոս յԱնտիո|քայ, վասն հեռանալոյ յա|զգակցութենէ»։ Սկ.՝ «Զայս իմն առաւել հարկ է, մարդ եթէ դատիցի յօրի|նաց ինչ որ ըստ կամացն հեշտութեան լիցի ընդ լծով ծառայութեան աւրինաց ան|կանի. իսկ եթէ զտցէ ծա|նրութիւն աւրինացն ասացե|ալ առ Քրիստոսի ազատութիւնն փախուցեալն անկանի...» եւն.։ Վջ.՝ «...եթէ աւրէնք դիմեալ ոք յամուսնութիւն բացե|ալ յառաջի կայ ՀՆ [=աշխարհ] ամենայն ապա թէ ուխտաւոր է փոյթ ամու|սնութեան առաւել արգելի է»։

17. Թ. 83բա — 104աա՝ Բարսեղ Կեսարացու կանոնները պէսպէ եւ բիւրապատիկ ախտերի մասին։ Կանոնների չարընթաց հմր.՝ չխթ — պժը։ Վնգ.՝ «Բարսղի է գիր կանոնակ|ան, վասն պէսպէս եւ բիւրապ|ատիկ ախտից, գլուխս մհբ.»։ Սկ.՝ «Թէ ոք ապահանէ յանկարծաւրէն բռնաբարոյ, մահապա|րտութեան դատաստանընկալ|ցի, բ. մահ համարեալ լիցի եւ մինչեւ վախճան ա|պաշխարեսցէ հայելով վարդապետն իշխան լիցի կարճել զկարգն...» եւն.։ Վջ.՝ «Որք զուգաւորին ընդ կնոջ եղբօր կամ ընդ քերց նորա, բա|ժանեսցին եւ ապաշխարեսցին զամենայն աւուրս կենաց իւրեանց, ապա թէ ոչ բաժանեսցին եղիցին իբրեւ զհեթանոսս»։

18. Թ. 104աա — 104բբ՝ Եփրեմ Ասորու ճառը կուսութան մասին։ Շարընթաց հմր.՝ պժթ — պիզ։ Վնգ.՝ «Կանոնականք տեառն Եփրեմի արդիւնակատար կրօնաւոր|ի, զոր սնուցանէր անապատն, ի կուսութեան ճառէն»։ Սկ.՝ «Կահանայ կամ կրօնաւոր կամ տարկաւագ, որ կամաւոր մտօք ինքեան ընկենու զպատիւն կամ զբեմն վասն ծանրութեան կամ վասն ծու|լութեան...» եւն.։ Վջ.՝ «Եւ տարունական պատարագ կիրակէի եւ յայլ աւուր ան|խտրաբար կատարեսցեն իսկ չոր|եքշաբաթ եւ յուրբաթ ոչ»։

19. Թ. 104բբ — 109աբ՝ Ներսէս կաթողիկոսի եւ Ներշապուհ եպիսկոպոսի կանոնները։

Հմմտ. Աբէլ Մխիթարեան, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք, Վաղարշապատ 1874, էջ 78—81. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 272—273։

ա. Թ. 104բբ — 105բա՝ ցանկ։ Վնգ.՝ «Կանոնք Ներսէսի կաթողիկոսի եւ Ներշապու|հոյ Մամիկոնէից եպիսկոպոսին»։

բ. Թ. 105բա — 109աբ՝ կանոններ, շարընթաց հմր.՝ պիթ — պկգ։ Վնգ.՝ «Այս կանոնքս եդան յա|ւուրս Ներսէսի կաթողիկոսի եւ Ներշապուհոն Մամիկոնէից եպիսկոպոսին։ Փառք Աստուծոյ ճռ։ անգամ յաղագս յամեն|այնի»։ Սկ.՝ «ա. Զի ոչ է պարտ բաժանել զժո|[ղո]վրդական վասն պաղոց եւ մըտից սրբոյ յե|կեղեցոյն, յորմէ համարձակե|ցան բաժանել զպատարագս անառակութեամբ...» եւն.։ Վջ.՝ «Եւ պատուիրեցաւ ձեզ ամենայն ամսեայ պարապել խը|նդրուանոց զաւուր շաբա|թի միոյ խնդրել յԱստուծոյ զմար|մնոյ առողջութիւն»։

20. Թ. 109աբ — 112աա՝ Կեսարիայի ժողովի կանոնները։

ա. Թ. 109աբ—109բա՝ ցանկ։ Վնգ.՝ «Կեսարիայ կանոնի գլուխ ժ.»։

բ. Թ. 109բա — 112աա՝ կանոններ, շարընթաց հմր.՝ պկգ — պհգ։ Վնգ.՝ «Որք ժողովեցան ի Կեսարիայ եպիսկոպոսք խ. վասն ինչ ա|նաւրէնութեանց կանանց, սա|հմանեցին կանոնս, գլուխս ժ»։ Սկ.՝ «ա. Վասն կանանց որ արա|մբի եցեն եւ չնան, թէ թողցեն ի բաց զպղծութիւն, եւ յապաշխարութիւն եկեսցեն, ե. ամ առ դրանն ընդ ձեռամբ կացցեն...» եւն.։ Վջ.՝ «.....եւ է. ամ հաւասարեսցէ ընդ ձեռա|մբ աղաւթից, ապայ հաղոր|դեսցի աւրինաց, եթէ կամք իցեն իրիցուն»։

21. Թ. 112աա — 114բբ՝ Նէոկեսարիայի ժողովի կանոնները։

Հմմտ. I. B. Pitra, Juris ecclesiastici Graecorum historia et monumenta, I, Romae 1864, p. 451—454. C. I. Hefele, Conciliengeschichte², I, p. 242—251։

ա. Թ. 112աա — 112աբ՝ ցանկ։ Վնգ.՝ «Նեառյկեսարիայի կանո|նիս գլուխ ի.»։

բ. Թ. 112աբ — 112բա՝ ներածութիւն։ «Այս կանոնքս յետոյ արդ եդան քան որ յԱնկիւրիայ կամ ի Կեսար|իա|յն, բայց զի քան զՆիկիայն յառաջագոյն. քանզի ժողով|եալ ի Նէոյկեսարիայ ժզ. եպիսկոպոս|ացն վասն պոռնկական աղա|նդիցն, որ թոյլ տային քահանայից վասն պղծութեան գործոց, յոր|ժամ ժողովեալ սահմանեցին կանոնս գլուխ ի.»։

գ. Թ. 112բա — 114բբ՝ կանոններ, շարընթաց հմր.՝ պհե — պղե։ Սկ.՝ «ա. Երէց այր, եթէ ամուսնով իցէ, ընդունելի իցէ ի կարգ|ս. ապայ թէ չնասցի կամ պոռնկեսցի, մերժել արժա|ն է զայնպիսին առաւելապէս եւ ջանալ արժան է զ|այնպիսին զի ապաշխար|ութեան հասցէ»։ Վջ.՝ «Եւ տարկաւագունքս ըստ պիտոյից պարտ է առնել որչափ տե|դիք եւ պէտքն խնդրեսցեն եւ մի առնելիս ինչ զի մի ցոփու|թիւն լինիցի»։

22. Թ. 114բբ — 118բա՝ Գանգրայի ժողովի կանոնները։

Հմմտ. I. B. Pitra, Juris ecclesiastici Graecorum historia et monumenta, I, Romae 1864, p. 487—492. C. I. Hefele, Conciliengeschichte², I, p. 777—792։

ա. Թ. 114բբ—115աբ՝ ցանկ։ Վնգ.՝ «Կանոնք Գանգրիայ, գլուխս իգ»։

բ. Թ. 115աբ — 115բբ՝ ներածութիւն։ Սկ.՝ «Իսկ դնելոյ զկանոնս եւ կա|րգելոյ եւ ծնաւալելոյ ընդհա|նրական կաթուղիկէ եկեղե|ցոյ, ուրախ եղեալ ամենեցուն, տային փառս ի բարձունս եւ եկեալ ի մի վայր վարդապետք կող|մամբք յարեւելից հիւսիւսոյ եպիսկոպոսունք ժե. ի մեծ եկեղեցին Գանգրացւոց առ սուրբն Եւսե|բիոս, զի առաւել եւս կարգ|եսցեն եւ ուղեսցեն...» եւն.։ Վջ.՝ «...ի ձեռն ապաշխարութեան արդարոց եւ մեղաւորաց եւ մի անյոյս լինել ի փրկութենէ, որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր»։

գ. Թ. 115բբ—117բբ՝ կանոններ, շարընթաց հմր.՝ պղզ — ջժը։ Վնգ.՝ «Գանգրեայ կանոնի գլուխ իգ.»։ Սկ.՝ «ա. Որ զամուսնութիւն մեղս զրեն եւ ան|գոսնեն, կամ որ ոչ ննջէ ընդ առն իւրում, իբրեւ իցէ հաւատացեալ եւ երկիւղած եւ գարշելի հա|մարիցեն եւ մեղադիր առն ի|ցեն իբրեւ այն թէ արքայութիւն ոչ կարէ մտանել, այ|նպիսիքն նզովեալ լիցին...» եւն.։ Վջ.՝ «...այնպիսի կերպարանօք առաջի մահկանացու իշխա|նի, թէ ընկալցի զքեզ. արդ ե|թէ ոք անցցէ ըստ կանոնս, ա|յնպիսին նզովեալ է»։

գ. Թ. 117բբ — 118բա՝ Վերջաբան, շարընթաց հմր. չժթ։ Սկ.՝ «Զայս զրեմ եւ ոչ խափան|եմք, ոյք յեկեղեցի Աստուծոյ զիրս ստա|նալ կամ ճարտարութիւն, կամ զպահսն կամին, այլ որք ընդունին զ[զ]իրս պահոց ի պա|տճառս ամբարտաւանելոյ ի վերայ այնոցիկ...» եւն.։ Վջ.՝ «...զի եթէ կա|րի փոքր մեղք իցեն եւ ընդ ա|պաշխարանօք ոչ անկանիցի մահու չափ լինին ըստ ա|ռաքելոյն, են մեղք որ մահու չափ են»։

23. Թ. 118բա — 126աբ՝ Անտիոքայ ժողովի կանոնները։

Հմմտ. C. I. Hefele, Conciliengeschichte², I, p. 502 ff.։

ա. Թ. 118բա — 118բբ՝ ցանկ։ Վնգ.՝ «Անտիոքայ կանոնիս գլուխ իգ.»։

բ. Թ. 118բբ — 119աա՝ ներածութիւն. «Եւսեբիոսի բան։ Յետ բազում ժամանակաց ան|ցանելոյ դարձեալ բորբոքե|ցաւ աղանդն Արտեմոնեայ վասն ամենասուրբ տօնից այլա|փոխումն առնել եւ յաւել|ուածս արտաքոյ կանոնեալ սուրբ ընթերուածող, որ ի սուրբ առաքելոց աւանդեցաւ ե|կեղեցոյ։ Վասն որոյ ժողովեալք զԱնտիոք եպիսկոպոսք լա., սահ|մանեցին զկանոնս զայս իգ. բանս»։

դ. Թ. 119աա—124աբ՝ կանոնն ևբ, չարընթաց հմր.՝ ՉԼի — ՉԼիբ։ Սկ.՝ «ա. Սահնայն ով ևւ համարձակևցի ևւ լուծցէ զ|սահմանս տուրբ ևւ մեծ ժողով|ին, որ ի Նիկիայ ժողովեցան, ևւ զառաքևլոցն, իբրև էր անդ ատուածապաշտ ևւ ատուածասէր թագաւորն Կոստանդիանոս վասն ամենատուրբ ծոնից վիրաբերևլոյ կա|պել ևւ մերժել եկեղեցոյ, թէ կաց|ցին . . .» ևւն.։ Վջ.՝ « . . . . . զայն-պիսին ուղղել ար|ժան է ըստ իրաւին զօրէ|ն ընտրելոցն է ժողով եպիսկոպոսաց»։

դ. Թ. 124աբ—124բա՝ «Եւսեբիոս ևւ ամենայնի որ սա|հմանեցաւ ևւ որոշեցաւ իբր անկ [=անդ] եղև ևւ յանձին կալայ. Թէոդոս ևւ ամենայնի զինչ ևւ սահմանեցաւ՝ հաճեց|այ ևւ յանձին կալայ»։ Կանոնների չարընթացմամբ՝ ՉԼզ.։

և. Թ. 124բա—126աբ՝ Անտիոքայ ժողովի խոստովանութիւնը։

Համմ. C. I. Hefele, Conciliengeschichte², I, p. 524 seq.։

«Խոստովանութիւն ժողով|ոյն Անտիոքայ։ Խոստովանեմք, որպես ուսուցին զիրք տուրբք ևւ վարդապետք ճը|շմարիտ յԱվ., որ ի Նիկիայ ևւ ճծ. որ ի Կոստան|դինուպօլիս, մ., որ յԵփեսոս տուրբս, որ ժողովեցան ի տուրբ Հոգւոյն ևւ իբրևանց ժամանակս հալածեցին զմոլորեցուց|չսն, որք էին իբրև զղայլս ապահանիչս հօտսին [=հաւատին] Քրիստոսի, ևւ զի նահատակեցան հօ|տովք [=հաւատովք] ևւ նզովեցին զամենայն հե|րձուածողս. ևւ ահա զրևա|լեն անուանք նոցա ի զիրն կե|նդանութեան, ևւ մեք որպիք ևւ ժառանգաւորք նոցա հաւատոցն ե|մք զօրանամբ ևւ նզովեմք զամենայն հերձուածողն։ Նախ նզովեմք զԱրիոս, որ հայհոյ|եաց ևւ ասէ, եթէ որպէ ոչ է ի բնութենէ հօր։ Նզովեմք ևւ զՄակեդոն, որ ասաց, եթէ Հոգին սուրբ նուազագոյն է քան զհայր ևւ զորդի։ Նզովեմք ևւ զՊօղոս Սամոսատացին, որ ասէր, թէ Յիսուս մարդ էր ևւ իմաստութեամբ զօր|անայր ևւ ուսուցանէր ևւ իմաստութիւնն մեծ է քան զՅիսուն։ Նզովեմք ևւ զՓլոպիանոս ե|պիսկոպոսն, որ ասաց, եթէ որպես նման|նութեամբ ևւ առ[ու]երօք երևեցաւ որդին Աստուծոյ յ֊ս [=յայնմանս] ևւ ոչ առ առա|զապէս մարմին ևւ չունչ սուրբ կուսէն։ Նզովեմք զԱպողինար, որ ասաց, թէ մանուին առ ի սուրբ կուսէն ևւ միշտ ևւ չունչ ոչ առ։ Առաւել նզովեմք զպիղծ զՆեստորն, որ հայ|հոյեաց ևւ ասէ, թէ մարմին ոչ ծնաւ Աստուած այլ մարդ արարած իբրև զմի ի մարգարէ|ից ևւ այնու մեծ էր քան զ|մարգարէսն, զի տաճար էր բանին Աստուծոյ։ Նզովեմք ևւ զԹէոդորոս ևւ զԻուդորոս ևւ զԲիա ևւ զԱկակ ևւ զԲարայ ի Մծբն|այ ևւ զպիղծս կանոնս նոցա, ևւ որ միանգամ հնազանդե|ցան կամ հնազանդին չար ժողովոյն Նեստորի՝

որ ամ|բարշացեալ ասաց, թէ չնո|րհի արժանաւորեցաւ Քրիստոս լինիլ տաճար բանին Աստուծոյ նո|յն այս մարդ Քրիստոս ի զաւակէ Դաւթի չարչարեցաւ ևւ մե|ռաւ ևւ յարուցաւն իւրով արար փրկութիւն ամենեցունն ևւ յաղագս այնր պատեցաւ լինել որպէ Աստուծոյ ևւ հայհոյեն ևւ ասեն այլ որպէ Աստուծոյ հօրէ ևւ այլ որ|պէ ի Մարիամայէ, մինչևւ խո|տորգեցան ևւ արհամարհե|ցին զՀայր ը. որպէսզի միո|վն բնութեամբ ևւ միովն նկա|մաւս ևւ յայտ մեծանան զչորրորդութիւն խոստովանութեամբ իւրեանց ևւ մոռացան զսուրբ երրորդ|ութիւնն, որ երկնաւորաց ևւ ե|րկրաւորացս փառաւորի ևւ ըստ նոցա բանիցն անօրէ|նութիւն հաստատի, եթէ նոր Աստուած երկրպագի որոյ սկիզ|բն ի Մարիամայ, ևւ այսր է, եթէ այդ այսպէս է ամենայն ազգ ևւ տո|հմիք կորեան. ևւ եթէ մարդ էր լոկ որ ի խաչին էր ևւ մարդոյ խաչի երկիր պագանեն ևւ զմարմին ևւ զարիւն ճաշակ|են զմարդոյ։ Նզովեմք ևւ զՏոմարն Լևւոնի, որ ը բնու|թիւնս ասաց ևւ երկուս դնեմս ի Քրիստոս յետ միաւորութեանն։ Նզովեմք ևւ զԱևւեբիանոս ևւ զդե|րս նորա զապականիչս, որ աբ|ար բաժանումն ի մարմնաւ|որութենէ անտի ևւ ասաց, եթէ մահկանացու էր մարմինն Աստուծոյ որպես ամենայն մարդոյ մինչևւ յյա|րութիւն անփտաւոր ևւ ան|կատար. բայց ի յարութեան փա|ռաւորեցաւ ևւ ոչ լուան զբանն Պետրոսի առաքե|լոյ, որ ասէ, եթէ մարմինն ոչ ետես զապականութիւնն, որ ոչ հաւատայ, եթէ բնութեամբ էութեանն ճանաչի միաւոր|ութիւնն, որ ոչ այսպես խոստովան|ի, նզովեալ լիցի։ Որ ոչ խոստովանի զՅիսուս Աստուած, որ հա|մբերեաց զհասն կամաւոր|ութեամբ վասն մեր մին ի զիմաց երր|որդութենէն ևւ բնութենէ Աստուծոյ հօր, բայց փոխանակ այդորիկ ասէ, եթէ մարդ է բնութեամբ այր է ա|րարած է չնորհօք որպէ է ընտրութեամբ անչար|չարելի է ևւ ան|մահական ևւ բնութեամբ մարդ զոլով. որ ոչ այսպես խոստովանի, նզովեալ լիցի։ Որ ասէ, թէ յերկնից կամ յայլմէ բնութենէ ևւ մարմին Աստուած ևւ ոչ խոստովանի, եթէ ի մերմէն բնութենէս ևւ ի Մա|րիամայ սրբոյ կուսէն առ Տէրն մեր մարմին չունէ, չար|չարեալ ևւ թաղեալ ևւ յարուցեալ, որպես ևւ կամեցաւ. որ ոչ այսպես խո|տովանի, նզովեալ լիցի։ Որ համարձակի զմարմին Աստուծոյ ասել ի մի|աւորութենէն ևւ ասէ բաժանումն Աստուծոյ ևւ մարմնոյն ևւ ոչ ա|ռաւել խոստովանի անա|պական մի բնութիւն անմահի մի զէմս երկիր պագել, զի է Աստուած ևւ մարմին ի մի բնութիւն անեղկտանալի. որ ոչ այսպես խոստովանի, նզովեալ լիցի։ Որ զկարզ միաբանութենէն բաժանեալ յերկուս բնու|թիւնս ևւ յայն մեծանէն զչորրորդութիւնն, այնպիսիքն նզովեալ [լիցի]։ Որ ասէ զմահն Տեառն կենդա|նացուցչի ևւ զչարչարանս

փրկարար ապականացու եւ ոչ առաւել խոստովանե|ցի, եթէ չարչարանաւք ան|չարչարելի եւ մահուամբ ան|մահորէն Աստուած, որ ամենայն ինչ դիւ|րին է. որ ոչ այսպէս խոստովանի՝ նզովեալ լիցի։ Որ ասէ զմարմինն ճշմար|իտ Աստուծոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի, թէ ի միաւոր|ութենէն մինչեւ ի յարութիւն ա|պականացու էր եւ անփառ|աւոր եւ անկատար, բայց ի յարութեանն փառաւորեցաւ եւ կատարեցաւ եւ ոչ խոստովանի, թէ որպէս զկնի յարութեանն էր նոյնպէս եւ յառաջ քան զյարութիւնն կենդանացուցիչ եւ անապ|ական. որ ոչ այսպէս խոստովա|նի, նզովեալ լիցի։ Զայս ամենայն, զոր գրեցաք եւ նը|զովեցաք զամենայն հերձուածո|ղս պիղծս ուսեալք ի մարգա|րէից եւ յառաքելոց, որ ասէ՝ փախիր ի պիղծ եւ ի նորա ձայն հակառակութենէ եւ ի մոլորե|ցուցիչ դիտութենէ, զոր պա|տուրեցին մեզ սուրբ վարդապետք եւ զոր ասացեալ է սրբոց ոչ մե|կնմեք ի նոցա ուղափար հաւա|տոյն, եւ խոստովանիմք եւ երկիր պագանեմք սուրբ երրոր|դութեանն հաւր եւ որդոյ եւ հոգոյն սրբոյ՝ այժմ եւ միշտ։ Սուրբ եւ խաղաղարար ժո|ղովն որ յԱնտիոք յԱստուծոյ ժողովեցան, յորում էին՝ Եւսեբիոս, Թէոդորոս, Պօղոս, Եւարքեղաոս, Եւ|ստաթէոս, Մանիկոս, Եւթերիոս, Յակոբոս, Ագապիոս, Մագնոս, Ենիոս, Թէոդիտոս, Աղփիոս, Նիկետաս, Ագապիոս, Մարկոն, Դեմատրոսն, Բարսոս, Աղէքսանդրոս, Պետրոս, Մովսէս, Պատակիոս, Անատողիոս, Մակիդոնիոս, Պետրոս, Կիւրիովն, Թէոդոր|ոս, Թէոդոսիոս յիշխանութենէ Հովտաց Ասորոց եւ Փիւնիկե|ցոց յԱրաբաց|ւոց ի Միջագետաց եւ ի Կիւ|լիկեցոց ի Սուրացւոց»։

24. Թ. 126աբ — 131ա՝ Լաւոդիկեայի ժողովի կանոնները։

Հմմտ. I. B. Pitra, Juris ecclesiastici Graecorum historia et monumenta, I, Romae 1864, p. 494—504. C. I. Hefele, Conciliengeschichte², I, p. 246—777։

ա. Թ. 126աբ — 127աբ՝ ցանկ։ Վնգ.՝ «Լաւոդիկեայ կանոնիս գլուխ ծե.»։

բ. Թ. 127աբ՝ ներածութիւն՝ «Յետ այսորիկ զաւրանա|յր յաստուացոց հերձուածն, որ չորեքտասաներորդ կո|չին, որ բազմաց այլայլութիւնս դաւանէին լլկանս եկեղեցոյ. վասն որոյ ժողովեալ ի Ղաւոդի|կեայ Փռիւգացւոց [=Փռիւգացւոց] եպիսկոպոսք իե., որք ժողովեալ ի պատկան ի անէս ի պէսպէս իշխ|անութենէ յարիանոսաց ջնջու|մն առնէին իթ. մանկանցն»։

գ. Թ. 127աբ — 131ա՝ կանոններ, շարընթաց հմր.՝ ջխ.։ Վերջին Ս. Գրոց ցանկը։ Սկ.՝ «Զի ոչ ըստ [=ըստ] եկեղեցոյ կանո|նաց, ոյք

աղատութեամբ եւ օր|ինօք բնակեցան ի միասին եւ զերկրորդ հարսանիսն մի՛ գա|ղտ արասցեն . . .» եւն.։ Վջ.՝ «տ. առ յԵբրայեցից. բ. առ Տիմոթէոս. ա. առ Տի|տոս. ա. առ Փիլիմոն։ Այս սահմանք եղան, որ ի միասին ժողովեալք եպ|իսկոպոսք նլէ.»։

25. Թ. 131ա — 137բբ՝ Սարդիկեայ ժողովի կանոնները։

Հմմտ. I. B. Pitra, Juris ecclesiastici Graecorum historia et monumenta, I, Romae 1864, p. 468—483. C. I. Hefele, Conciliengeschichte², I, p. 558—605։

ա. Թ. 131ա՝ ցանկ։ Վնգ.՝ «Սարդիկեալ [=Սարդիկեայ] կանոնիս գլուխ իա.»։

բ. Թ. 131բ — 137բբ՝ կանոններ, շարընթաց հմր.՝ ռ—ռի։ Վնգ.՝ «Կանոնք Սարդիկեայ, որք ժողովեցան, գլուխ իա.»։ Սկ.՝ «ա. Ոսիոս եպիսկոպոս ասաց. ոչ այսքան յետին սովորութիւն, որքան վնասական արդեանցն զանազա|նութիւն յինքեանց ի հիմանց անտի արմատակի խլել . . .» եւն.։ Վջ.՝ «. . . ի պաղատն ոչ ձեռն|արկել, պարտ է ի թուղթսն եւ ոչ հաղորդել ընդ այնպի|սումն. ամենեքին ասա|ցին. սահմանեսցի այս»։

26. Թ. 137բբ — 138աբ՝ Եպիփան Կիպրացու կանոնական գիր։ Կանոնների շարընթաց հմր.՝ ռիա—ռիդ։ Վնգ.՝ Կանոնական գիր տեառն Ե|պիփանու ասացեալ։ «Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ, որ տանտիկին ունի|ցի ի տան ըստ հեթա|նոսական սովորութեանց, լուծցին իւրաքանչիւր աստիճանէ, բայց [=բաց] ի հանոյ կամ ի մօրէ կամ ի քերց։ — Որք ուլունս արկանեն վասն կրից կամ վասն այլ ինչ հը|մայութեանց բարբանջանաց կամ գրարութեամբ վարին, որոշեսցին յեկեղեցոյ, զի թողին զԱստուած եւ գնացին առ ճան|ճիկն Ակկարոնի։ — Զկնի յարութեանն զերիս աւուրս ոչ ընթեռնուն կա|թուղիկէք, վասն զի հայր եւ ո|րդի եւ ի սուրբ հոգին են կանոնք, եւ երկրորդ կանոն, վասն զի յորդի է որպէս ոչ թողու ոգի նորա ի դժոխս եւ ոչ մա|րմին նորա ետես զապակա|նութիւն, եւ յոյս եղեւ ամենայն զաւ|առաց երկրի։ — Որք ի ծովս կորեան կամ ի գետոց կամ յամբարշտաց կամ ի շանդից եւ ի գա|զանաց եւ իւրոյ եւ ամենայն չարա|մահութեանց, զյիշատակս ամենայն մե|ռելոյ, որ ի Քրիստոս հաւատացե|լոցն, կատարեսցեն ի տնօրէնու|թենէ մինչեւ ցհասարակաց յարութիւնն։ — Որք ի զատկէն մինչեւ ցպէնդակոստն եւ զամենայն կիր|ակէս պսակ դնեն, նզով|եալ եղիցին. իսկ եթէ յիշատակ սրբոց պատահին յաւու|րս յարութեան Տեառն, նոցա յիշատակ|քն հասարակաց կատարեսցեն. տուն կարապետին եւ մկր|տչին Յովաննու, եթէ յար|ութեան աւուր հանդիպին անխափան կատարեսցեն. նմանապէս եւ զամենայն մարտիրոսաց»։

40601-67
ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ ԳԻՏ ԱԿԱԴ

27. Թ. 138աբ՝ Եղիշայի կանոն, չարընթաց հմր.՝ ոխե.։ «Եղիշայի՝ եթէ ոք ի կիրակէի կամ տաւնի կամ յերեւելի աւու|րս ամուսնանայ ընդ կն|ոջ խրտմ, ը. օր ապաչխա|րեսցէ, հաղորդեսցի»։

28. Թ. 138աբ—139բբ՝ Եփեսոսի ժողովի կանոնները։

Հմմտ. I. B. Pitra, Juris ecclesiastici Graecorum historia et monumenta, I, Romae 1864, p. 515—519. C. I. Hefele, Conciliengeschichte², II, p. 209—211. U. Bouriant, Actes du concile d'Éphèse. Texte copte publié et traduit. Paris 1892 [Mémoires publiés par les membres de la mission archéologique française au Caire, sous la direction de Maspero et Bouriant, vol. VIII].

ա. Թ. 138աբ—138բա՝ ցանկ։ Վնդ.՝ «Կանոնք ժողովոյն, որ յԵփեսոս. գլուխք ղ.»։

բ. Թ. 138բա—138բբ՝ Ներսէս Ա Ծ ու թ իւն՝ «Իսկ յաւուր փոքու Թէո|դոսի այր վիշապագլուխ երեւեցաւ եւ Նեստոր անուն. սա սկսաւ լինել ընդեմ [=ընդդէմ] ճշմարտութեանն եւ չրջաբերական թղթովքն աղանդէը զոխիզերս, զի (զի) էր հպարտ Կոստանդի|նուպօլսի. ուրուագեալ ի Սատանայէ զՊաւղոս ի Սամսա|տացո եւ զԹէոդոր ի հայհոյ|ութիւն հաստատէր. զերկուց բնութիւնից չաբայարումն պատկանելով ի անօրէնութիւն բանին Աստուծոյ խորհուրդն քողափորէը. վասն որոյ ժողովեալ եպիսկոպոսք մ. անաաբրական սր|ով կտրէին զնայ ընդմէջ եւ կորզէին ի տարաբնակ վարս»։

գ. Թ. 138բբ—139բբ՝ կանոնները, չարընթաց հմր.՝ ոխզ — ոլա։ Վնդ.՝ «Սահմանադրելով կա|նոնս գլուխ ղ.»։ Սկ.՝ «Քանզի պիտոյ էր, որ ոչ եկեղ ի ժողովն եւ մնացին [ի] դաւաճին, ոչ անպիտանալ, զկարզաւ|որեալ եւ այլս ծանուցա|նեմք...» եւն.։ Վջ.՝ «...եթէ եպիսկոպոսունք լեցեն կամ վիճակեալք յիւրեանցն. ամենեւին, ապայ եթէ հակա|նք [=աչխարհականք] լեցեն, անհաղորդք լիցին»

29. Թ. 139բբ—140աբ՝ Կիւրեղ Աղէքսանդրացու կանոնները. Շարընթաց հմր.՝ ոլբ — ոլզ։ Վնդ.՝ «Կանոնք Կիւրղի Աղէքսանդրացւոյ։» Սկ.՝ «Քահանայ որ կո|յս լեցէ կամ այրի եւ հ[=աչխարհ] քահանայութիւն առնէ, նա եւ ժողովուրդն եւ ընդունողք նորա՝ նզովեալ ե|ղիցին։ Քահանայ որ կին ունի...» եւն.։ Վջ.՝ «...աղօթանոցին ջնջմեռանդն ապաչխարութեամբ եւ ապա հաղորդեսցի օրինացն»։

30. Թ. 140աբ—158բբ՝ Ս. Սահակայ կանոնները։

ա. Թ. 140աբ—146բբ՝ Քորեպիսկոպոսաց մասին։

Հմմտ. Սոփերք հայկականք, Վիեննեի 1853—1862, հատոր բ., էջ 80—99.

Աբէլ Մխիթարեան, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնագրութեամբք, Վաղարշապատ 1874, էջ 50 եւլն. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 277—281։

ա. Թ. 140աբ—141աբ՝ ցանկ։ Վնդ.՝ «Սրբոյն Սահակայ հա|յրապետի կանոնք, զլուխք ծե.։

բ. Թ. 141աբ—146բբ՝ կանոնները, չարընթաց հմր.՝ ոլէ—ոկթ։ Վնդ.՝ «Սրբոյն Սահակայ հա|յրապետի յաղագս քոր|եպիսկոպոսաց թէ որպես պարտ է զկ|արգն հաստատուն պահել յեկեղեցիս»։ Սկ.՝ «ա. Զի սրբոց բարեպաշտից եւ առա|քինութեամբ պայծառացելոց պարտ է հաւատալ, զի պատիւ կարգի...» եւն.։ Վջ.՝ «...պաշտօնասիրութիւն նմանութիւն բերել անձինս հրեշտակական վար|ուց աւետասիրութիւն եւ ե|ղբայր սիրութեան»։

բ. Թ. 146բբ—151բա՝ կղերի մասին։

Հմմտ. Սոփերք հայկականք, Վիեննեի 1853—1862, հատոր բ, էջ 100—116. Աբէլ Մխիթարեան, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնագրութեամբք, Վաղարշապատ 1874, էջ 25—32. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 281—285։

գ. Թ. 146բբ—151աբ՝ կանոնները, չարընթաց հմր.՝ ոհ — ոհը։ Վնդ.՝ «Նորին սրբոյ սրբոյն թէ որպես սահմանեցաւ կարգ ուխտի, բան երկրորդ»։ Սկ.՝ «Քանզի բազու|մք կարծեցին սր|պիտութեամբ այլ գոմն եկեղեցի սահել եւ ա|յլ գոմն վասն...» եւն.» Վջ.՝ «...քանզի այդ գործ է վարդապետի եւ հոգեւոր հովուի»։

դ. Թ. 151աբ—151բա՝ յիշատակարան՝ «Այս սահմանադրութեան [=սահմանադրութիւն] կարգաց գրեցաւ հրամա|նաւ երանելոյն Սահակայ մեծ հայրապետի Հայաստան տի [=աշխարհի], ընկալեալ ի քաջ նահա|տակէն ի տեառնէն Գրիգորէ. թարգմանեցաւ միայն յու|նէ ի հայ։ Արդ եթէ ոք անհն|ադանդեալ կանոնիս նորայ|ձեւել կամեսցի զկարգեալ սահմանադրութիւնս, մի՛ ընկա|լցի մասն եւ վիճակ ժառա|նգութեան յարքայութենէն Քրիստոսի եւ Աստուծոյ, եւ որ ոք միաբանեալ կա|տարեսցէ՝ ընկալցի զարհնութիւն ի Տեառնէ, հաղորդելով պարգեւացն եւ անվախճան հան|գստեան եւ երջանկին Գրիգորի եւ հաւրն մերոյ Իսա|հակայ եւ նոցին հետեւող|ացն ճշմարիտ ուղափառու|թեանց, որք ի մեծ եւ յերեւել|ում աւուրն են պատկելոց յամենաբաւական աչօյն, անթարգմանելի պայծառու|թեամբք մչանչենաւորեա|լք յաւիտեանս յաւիտենից. ամէն»։

գ. Թ. 151բա — 153բբ՝ եպիսկոպոսաց մասին։ Շարընթաց հմր.՝ ռձ — ռձե։

Հմմտ. Սոփերք հայկականք, Վենետիկ 1853—1862, հատոր բ, էջ 71—79. Աբէլ Մխիթարեան, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք, Վաղարշապատ 1874, էջ 40—44. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vatic nis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 276—277։

Վնգ.՝ «Նորին թէ որպէս պարտ է եպ|իսկոպոսաց ունել զնտանիս սրբոյ եկեղեցոյ»։ Սկ.՝ «Այցելու եւ հասարակ|աց հայր է եպիսկոպոսն. վասն այսորիկ ...» եւն.։ Վջ.՝ «...ընդ որում հաւր միանգամայն եւ հոգոյդ սր|բոյ վայել է փառք, իշխա|նութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ»։

դ. Թ. 154ա — 156բբ՝ եկեղեցու տնտեսութեան մասին։ Շարընթաց հմր.՝ ռձզ — ռղբ։

Հմմտ. Սոփերք հայկականք, Վենետիկ 1853—1862, հատոր բ, էջ 117—126. Աբէլ Մխիթարեան, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք, Վաղարշապատ 1874, էջ 45—50. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 285—289։

Վնգ.՝ «Նորին թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց պահել զգանձս եկե|ղեցոյ մամ [= կամ] որպէս մատաղ արար|եալ»։ Սկ.՝ «Նաւահանգիստ է ա|մենեցուն տաճար աղաւթից եւ տեղի խնդրուածոց մերոց, զոր յարանուա|նաբար եկեղեցի սովոր եմք կոչել ...» եւն.։ Վջ.՝ «... իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ հանապազ յաւիտեանս. ամէն»։

ե. Թ. 156բբ — 158բբ՝ քահանայից հասից մասին։ Շարընթաց հմր.՝ ռղգ։

Հմմտ. Սոփերք հայկականք, Վենետիկ 1853—1862, հատոր բ, էջ 127—134. Աբէլ Մխիթարեան, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք, Վաղարշապատ 1874, էջ 31—32. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 289—290։

Վնգ.՝ «Նորին [այս բառի միեւնոյն տեղում՝ (Քանզի)] սրբոյն Սահակա Հայոց կաթուղիկոսի գիր աղանդութեան [= աւանդութեան, յաղագս սպասաւորաց սրբոյ եկեղեցո եւ պտղ|ոց ժողովրդականաց ընծայելոց ի տուն Աստուծոյ»։ Սկ.՝ «Քանզի սուրբ Լուսաւ|որիչն հայոց մեծն Գր|իգորիս, ծնեալ վեր|ստին զՀայաստան Ֆս [= աշխարհս], աւազանին ծննդեա|մբ, եւ ընծայեալ յորդէգր|ութիւն Հաւրն երկնաւորի ...» եւն.։ Վջ.՝ «... եւ ընկալ|ցին զաւրհնութիւնս ի նոցանէ զի կարգ եկեղեցոյ հաստատ|ուն եւ անշարժ եղիցին եւ Աստուած փառաւորեսցի յամենայնի այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»։

31. Թ. 159ա — 170բա՝ Շահապիվանի ժողովի կանոնները։

Հմմտ. Աբէլ Մխիթարեան, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք, Վաղարշապատ 1874, էջ 57—68. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 291—296. Յ. Տաշեան, Վարդապետութիւն Առաքելոց..., Թուղթ Կոդրատոսի և կանոնք Ագդէի, Վիեննա 1896, էջ 183—195։

ա. Թ. 159ա — 159աբ՝ ցանկ։ Վնգ.՝ «Հայոց ժողովոյն կանով|նին գլուխ ի.։

բ. Թ. 159աբ — 160բբ՝ ներածութիւն՝ «Եւ եդեալ միաբանութեամբ աւագացն Հայոց յեւ|թներորդ ամի վաղխճանելոյն Սահակայ, կարգեցաւ կա|նոնքս այս։ Սահմանք եւ կան|ոնք կարգի Աստուծոյ սը|րբոյ եկեղեցոյ, զոր եդին վարդապետք Հա|յոց ի լրութիւն առաքելական եւ նիկիական կանոնաց հաստատութիւն։ Պարտ է եւ պ|ատչաճ է նավավարին հո|գալ զարուեստագործ|ութիւն նաւին եւ զչաւիղս ծո|վուն նկատել եւ ըստ հողմո|յն աջողութեան գնալ ի վերայ [մ]կանաց ծովուն, նոյնպէս եւ զօրա|վարին յամենայն ժամ զզաւրսն ի հանդիսի կացուցանել՝ զա|յր ընդիր եւ զձի ընդիր, զ|էն զարամբ սպառազէն զերիվարաւ, եւ ակն ունել՝ ի ճակատուն յաղթող գտանել եւ առնուլ զպսակ եւ զ|պատիւ թագաւորին։ Ապայ ա|ռաւելապէս արժան եւ իր|աւ է վարդապետաց սրբոյ եկեղեցո, հովուաց առաջնորդաց օր|ինաց արդարութեան եւ ըստոյգ պատուիրանաց Աստուծոյ կենդանոյ յամենայն ժամ յօրէ|նս Տեառն խորհել ի տուէ եւ ի գիշերի, զմանկունս եկեղեցո յամենայն ժամ նորա փետուր զա|րդարել ի Տեր։ Յետ փոխելո յերկրէս վարդապետացն հարցն արդարոցն եւ ճշմարիտ օրէ|նդիր առաջնորդացն եւ մանաւանդ սրբոյ քահանայապետին Սահակայ Հայոց կաթուղիկոսին եւ հոգէլից, հոգէկիր, ճշմար|տասէր վարդապետին Մեսրովպա զերկիրս Հայոց վարդապետութեամբ իւրով, ի փոխել նոցա յերկիրէս, լինէր եղծումն եւ քակումն կարգաց եւ աւրինաց սրբոյ եկեղեցո, որպէս եւ տեսանէր ի Տե|սլեանն յառաջագոյն սուրբ քա|հանայապետն Աստուծոյ Սահակ կամ եւս յառաջ սուրբն Գրիգորիոս։ Բա|զմանային որք յաճախէին ի գործս պղծութեան ընդդէմ գնացից.. ի ցամաքել սիրոյն բազմանայր անաւրէնութիւնն եւ ոչ ոք էր, որ քաղէր զորումն եւ սրբէր զդաղձն վնասակար. քանզի արմատացեալ էր սէղն եւ տարածէր օր ըստ օ|րէ եւ լինէր յանաճումն մը|ծղնէից եւ այլոց չարեաց կնահանէից, պոռնկաց, գո|ղաց, անձնակամակաց, ամենայն խոտորնակ չարագործ Ֆիս [աշխարհիս] Հայոց, ի մէջ տանս Թորգոմա. եւ լինէր սուգ եւ տրտմութիւն, որք էին ի ժամանակին նախան|ձախնդիր վարդապետք, եպիսկոպոսք, երիցունք, ոյք ունէին զու|խտ սրբութեան, պաշտաւնե|այք Քրիստոսի եւ ման-

կունք սրբոյ եկեղեցո. այլ եւ յախտէ [= յուխտէ] քահանայիցն ոչ գնացին ըստ սրբութեան արդար ճանապարհին եւ ման|աւանդ, զի չէր ի ժամանակին այնմիկ իշխանութիւն եւ տէր|ութիւն իձեռն ազգին Մամիկո|նէից, զի զօղեալ [= զօղեալ] եւ նուաճե|ալ եւ հնազանդեալ էին համ|բարձելոյ պարսկային թագաւորու|թեանն, զի թէպէտ եւ հեծէին, մռմռային, մռնչէին ի նմանութիւն կորեանց առիւծուց, Վարդան Մամիկոնեան համազգօք իւրեանց հանդերձ եղբարբք, այլ կայ|ին իբրեւ ի գառազգի [= գառազգի] արգե|լեալք, եւ ակն ունէին ի վերու|ստ աւգանակութեան, քանզի չարահնար ազգն Պարսիս [= Պարսից] ի կասկածանս կային եւ յերկիւղի եւ ոչ տային զիշխանութիւն ի ձե|ռս նոցա։ Ապա աւր ըստ [= ըստ] աւրէ բղխէր զբանն եւ գիշեր զի|շերի ցուցանէր զգործս անա|գրելութեան [= անարգելութեան]. բան առ բան հա|սանէր, մարդ ի մանդոյ հընչու|մն լինէր յիւրաքանչիւր լսե|լիս. գային ժողովէին ի հրա|մանէ միաբանութեանն յեղե|ալ կեան [= կէտն] ի Շահապիվան ի բանակեալ [= բանակեաղ] թագաւորացն Հայոց, ի ժամս նորաբեր տօնին. եւ լի|նէր այս ժզ. ամի թագաւորութեանն Յազկերտի Պարսից արքայի. եւ Վասակա Սիւնեաց մեր զպա|նութեան [= մարզպանութեան] Հայոց եւ Վահանայ Ամատունոյ հազարապետութեանն եւ Վրվայ Խոռխոռունեաց մա|զխաազութեանն. եւ ժողովէին եպիս կոպոսք խ. եւ երիցունք եւ սարկաւագունք բազում եւ նախանձ|աւոր պաշտաւնեայք. եւ հա|մարէին ուխտ սրբոյ եկեղեցո իշխանք, ամենայն գաւառատեա|րք, [գ]աւառակալք, պետք, բռ|նաւորք, զօրագլուխք, հա|զարաւորք, կուսակալք, աղ|քատք [= ազատք] կողմանց կողմանց, աւագ նախարարք ծին [= աշխարհին] Հա|յոց, որք էին նախանձախն|դիր աւրինացն եւ սրբութեան, միաբան ասէին այսպէս. թէ զեդեալ կարգ սրբոյն Գրիգորի եւ Ներսէսի եւ Սա|հակայ եւ Մաշթոցի, դուք անդրէն հաստատեցէք եւ այլ զլաւն եւս, որպէս եւ ձեր կամք են, եւ մեք կամաւք եւ ախորժիւք յանձն առնումք, քանզի կարգք եկեղեցո թուլացան եւ մարդիք յանօ|րէնութիւն դարձան. արդ օր|էնք, որ Աստուծոյ հաճոյ են եւ եկե|ղեցոյ նորա շինութեան [= շինութիւն, դուք զայն կարգեցէք եւ մեք հն|ազանդիմք եւ հաստատուն պահեմք. եւ եթէ ոք հաստա|տուն ոչ պահիցէք զկար|գս աւրինացս կամ եպիսկոպոսք կամ երէց կամ ազատ կամ շինական, պատուհաս կրե|սցէ եւ տուգանս տացէ։ Եւ զայս ասացեալ միա|բան քահանայապետացն, եթէ առաքե|լական եւ նիկիական կան|ոնն հաստատուն կացցեն, եւ մեք հնազանդեալք եմք, բայց որ ինչ պիտոյ է ի լրութիւն ի նոյն կանոնս եւ մանաւա|նդ ի մէջ տանս Թորգոմայ եւ կողմանց արեւելեացս, ա|պայ կարգեցին եւ եդին այ|սպէս»։

գ. Թ. 160բբ — 170բա՝ կանոններ, շարընթաց հմր.՝ ողե — ռճժգ։ Սկ.՝ «Եթէ եպիսկոպոս, որ գացի ի պղ|ծութիւն կամ ի պոռնկութեան կամ զինչ ...» եւն.։ Վջ.՝ «... ակն կալցուք ժառանգեսցուք զպարգ|եւս նորա զանվաղխճան յօիտեանս [= յաւիտեանս] յաւիտենից. ամէն»։

32. Թ. 170բա — 172բա՝ Սեւանդոս եպիսկոպոսի նամակը։

ա. Թ. 170բա — 170բբ՝ ցանկ։ Վնգ.՝ «Թուղթ Սեւանդեայ եպիսկոպոսին»։

բ. Թ. 170բբ — 172բա՝ նամակ։ Շարընթաց հմր.՝ ռճժգ — ռճիէ։ Վնգ.՝ «Ի թղթի աստ Ապաշխարութեան բանք ժգ.»։ Սկ.՝ «Սեւանդոս եպիսկոպոս, որ էք յԱստուծոյ ի Քրիստոսէ եւ ի Հոգոյն սրբոյ, քահանայից ի Տեառնէ ողջոյն։ մժբ. եպիսկոպոսք ժողովեցաք եւ քննեց|աք, որպէս եւ գտաք ...» եւն.։ Վջ.՝ «... եթէ ծի [= աշխարհի] աստ ապաշխարութեան ոչ այսպէս ապաշխարեցուք, իսկ ծին [= աշխարհին] հանդերձեալ զի գործեցէք»։

33. Թ. 172բա—174բա՝ Անտիոքայ երկրորդ ժողովի կանոնները։

ա. Թ. 172բա — 172բբ՝ ներածութիւն՝ «Կանոնք երկրորդ Ան|տիոքայ։ Որպէս ասէ յերկուց եւ յերից վկայից հա|ստատեսցի ամենայն բան. այլ ինքն Տէրն մեր եւ Փր|կիչն ասէ, որ բ. եւ գ. միաբ|անին յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա եւ զամենայն, զոր ինչ խնդր|եսցեն, եղիցի նոցա, եւ եթէ ասի|ցեն լերինս փոխեաց, փոխե|սցի։ Սուրբ եւ խաղաղարար ժողովն որ ժողովեցան յԱնտիոքա|ցոց եկեղեցին կողմանցն Պաղեստինացւոց եւ Ասորոց եպիսկոպոսք ժբ., որ հաստատեցան զմեծ ժողովն Նիկիայ զկանոնն ոչ աւելի քան զայն եդեալ, այլ զնոյն հաս|տատելով առաքեցաք ընդհա|նրական սուրբ կաթուղիկէ յե|կեղեցոյ. խաղաղութիւն ընդ ձեզ բազմասցի։ Ողջ լերուք ի Տէր»։

բ. Թ. 172բբ — 174բա՝ կանոններ, շարընթաց հմր.՝ ռճիթ — ռճլի։ Սկ.՝ «Եպիսկոպոսք մի՛ իշխան լիցին այլոց վիճակի ձեռնադրել զքահանայութիւն, բայց եթէ գլխաւորին հրամա|նաւ.» եւն.։ Վջ.՝ «Եւ միահամուռ հին եւ նոր կտակարանաց տունս թիւ չի.»։

34. Թ. 174բա — 176բբ՝ Յովհան Մանդակունու կանոնները։

Հմմտ. Աբէլ Մխիթարեան, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք, Վաղարշապատ 1874, էջ 73—76. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 296—298։

ա. Թ. 174բա — 174բբ՝ ցանկ։ Վնգ.՝ «Յոհաննու Մանդակունոյ Հայոց կաթուղիկոսի»։

բ. Թ. 174բբ — 176բբ՝ կանոններ, չարընթաց հմր.՝ ռճլթ — ռճխզ։ Վնգ.՝ «Յոհաննու Մանդակ|ունոյ»։ Սկ.՝ «ա. Վասն սրբոյ պասեք|ին պահոցն. ի կանոնս ի չաբաթու ոչ հրամայեն պահել, եւ յայտ|նի է ...» եւն.։ Վջ.՝ «... մատ|նեցէք զայնպիսին ի սատակ|ումն մարմնոյն, զի ոգին ապր|եսցի յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիսոսի»։

35. Թ. 176բբ — 177բա՝ Յովհան Մանդակունու կանոնական բան։ Շարընթաց հմր. ռճխը։

Հմմտ. Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք։ Երկրորդ տպագրութիւն, Վենետիկ 1860, էջ 207—208. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 298—299. J. M. Schmid, Heilige Reden des Johannes Mandakuni, Regensburg 1871, S. 243—244։

Վնգ.՝ «Նորին Յովհաննու Ման|դակունոյ Հայոց կաթուղիկոսի, թարգմանչի աշակերտելոց մեծին սրբոյն Սահակայ հայրապետին, բան կանոնական»։ Սկ.՝ «Արդ ես զայս ըստ իմ|ում գիտելոյ ասեմ, եթէ որ զմանուկ տգէտ զտխմար, որ ոչ կարէ կարդալ ...» եւն.։ Վջ.՝ «... որպէս ի սուրբ աւետարանին Փրկիչն ասէ առ սուրբ աշակերտսն, ձը|րի առէք եւ ձրի տուք»։

36. Թ. 177բա — 178բբ՝ Մամիկոնեանց Աբրահամ եպիսկոպոսի Վաջագան Աղուանից թագաւորին ուղղած կանոնները։

Հմմտ. Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհին, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, ծախիւք ներքին խորհրդականի և ասպետի Խաչատրոյ Յովակիմեան Լազերեվի, Մոսկվա 1860, էջ 64. Պատմութիւն Աղվանից արարեալ Մովսիսի Կաղանկայտուացւոյ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կ. Վ. Շահնազարեան, Փարիզ 1860, էջ 182. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 299—300։

ա. Թ. 177բա՝ ցանկ։ Վնգ.՝ «Աբրահամու Մամիկոնէ|ից եպիսկոպոսի առ Վաջագան Աղաւնից [= Աղուանից] արքեպիսկոպոսին»։

բ. Թ. 177բբ — 178բբ՝ կանոններ, չարընթաց հմր.՝ ռճխե — ռճխէ։ Սկ.՝ «Միտ դիր, ո՛վ սիրելի, զի եթէ գիտութիւն եւ անգիտութիւն հանգուցելոցն ասիցէ ...» եւն.։ Վջ.՝ «... ը [= ըստ] աւիտարանին ընդունին հրաւիրեալք յարքայութիւնն»։

37. Թ. 178բբ — 180բբ՝ Յովհաննէս Սիւնակենի կանոնական

հարցումները եւ Հայոց Սահակ վերջին կաթողիկոսի պատասխանները։

Հմմտ. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 300—302։

ա. Թ. 178բբ — 179աբ՝ ցանկ։ Վնգ.՝ «Կանոնն վերջնոյ Սահա|կայ Հայոց կաթուղիկոսի»։

բ. Թ. 179աբ — 180բբ՝ կանոններ, չարընթաց հմր.՝ ռճխը — ռճկբ։ Վնգ.՝ «Կանոնականք Յովհա|ննայ Սիւնակենի քաղաքաց եւ առընթեր եդեալ պատասխանիքն, մին Սահակայ Հայոց կա|թուղիկոսի եւ նորին աթոռակցաց եպիսկոպոսակցաց բազմաց, գլուխ ժե.»։ Սկ.՝ «Հարցումն հարցողի։ Եթէ պարտ է եպիսկոպոսին, մինչդեռ յեկեղեցւոջ իւ|րում իցէ, եւ ի գործս եպիսկոպոսութեանն, երկաթս առնուլ ...» եւն.։ Վջ.՝ «... զբեռն հոգոյ, զոր մե|ղաւորս միահամուռ ասացից որ է ըստ ուխտից մերոց»։

38. Թ. 180բբ — 186բբ՝ Յովհան Օձնեցու կանոնները։

Հմմտ. Յովհաննու իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ 1833, էջ 24—33. Beati Johannis Ozniensis Sermones duo, quod per P. Joh. Bapt. Aucher Vic. Gen. Congreg. Mechit. nunc primum ex armenio in latinum translatos Emin. ac. Rev. Jacobo Card. Monico Venetiarum Patriarchae S. Purpuram solemniter induenti Mechitaristica Armeniorum Societas gratulationis devotionisque ergo D. D. D., Venetiis 1833, p. 56—77. Աբէլ Մխիթարեան, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք, Վաղարշապատ 1874, էջ 91—95. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 1, p. 302—307։

ա. Թ. 180բբ — 181աբ՝ ցանկ։ Վնգ.՝ «Կանոնք Տեառն Յովանիսի իմա|ստասիրի Հայոց կաթուղիկոսի, գլուխ լբ.»։

բ. Թ. 181աբ — 186բբ՝ կանոններ, չարընթաց հմր.՝ ռճկգ — ռճղգ։ Վնգ.՝ «Կանոնն Յոհանիսի Հայոց կաթուղիկոսի»։ Սկ.՝ «Եպիսկոպոս կամքահանայ կամ սարկաւագ կամ յով իցէ ու|խտէ եկեղեցոյ, յարբեցութեան գտեալ ...» եւն.։ Վջ.՝ «... զի մի յարմատ դա|ռնութեան ի վեր երեւեալ նե|ղիցէ եւ նովաւ բազումք պղծիցին։»

39. Թ. 186բբ — 190բբ՝ Սիոն կաթողիկոսի կանոնները։ Շարընթաց հմր.՝ ռճղդ — ռմժե։

Հմմտ. Աբէլ Մխիթարեան, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք, Վաղարշապատ 1874, էջ 96—99. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 307—310։

ա. Թ. 186բբ—187բբ՝ ներածութիւն։ Շարընթաց հմր.՝ ռճղդ։ Վնգ.՝ «Կանոնք Սիովնի Հայոց կաթուղիկոսի. գլուխ իբ.»։ Սկ.՝ «Որք պատմող աստուածային աւրինադրութեանն եղեն աչակերտքն, առաքեալքն ի Տեառնէն եւ ընթհա|նուր տիեզերաց աւետարանել...» եւն.։ — 187ա՝ «Վասն որո ես Սիոն՝ որ ոչ արժանեաց, այլ ըստ ողորմութեանն Աստուծոյ ե|պիսկոպոսապետ Հայոց, հոգ զայս անձին եդեալ կոչեցի զեպիսկոպոս|ակիցս իմ ի հոգեկան հար|կիս այսորիկ խորհուրդ...» եւն.։ — 187աբ՝ «Ընդ իս էին աստուածապատիւ եպիսկոպոսու|նք Ֆի [= աշխարհի] Հայոց Գէորգ Ոստան եպիսկոպոս, Սադովկ Սիւնեաց ե|պիսկոպոս, Եսայի Գողթան եպիսկոպոս, հարկ եղեւ հասանել ի մայրա|քաղաքդ Աղուանից Պարտաւ. էր ընդ մեզ եւ բարե|- [187բա]պաշտ իշխան Ֆին [= աշխարհին] մերոյ Սահակ Բագրատունի, եւ այլ պատուական ազատք մեր՝ բարեպաշտութեան աշա|կերտք, ընդ նմայ, Ատրներ|սէհ Սիւնեաց տէր, Սըմ|բատ Բագրատունի, Մերու|ժան Արծրունի, Վահրամ Խորխոռունի, Արտաւազ Աշոցայ տէր, Վահան Վան|անդայ տէր, Սահակ Գող|թան տէր։ Արդ աջողեաց ու|ղղիչն խորհրդոյ...» եւն.։ Վջ.՝ «... սահման բարէկարգութեան առաջնո|րդաց եկեղեցոյ եւ ժողով|րդոց նոցին»։

բ. Թ. 187բբ—190բբ՝ կանոններ, շարընթաց հմր.՝ ռճլե — ռմժէ։ Սկ.՝ «Եպիսկոպոս կամ քորեպիսկոպոս կամ երէց մի՛ ստասցի ի պատճա|ռս փառաց մարմնոյ զփառս շնորհաց հոգոյն...» եւն.։ Վջ.՝ «... զձեր մանկունս զուսու|մնաբազումսն Սիրաքայ իմաստութիւնն»։

40. Թ. 190բբ—193աբ՝ Վաջագան թագաւորի կանոնները։

Հմմտ. Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհին, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա 1860, գլ. իզ, էջ 65—69. Պատմութիւն Աղվանից, արարեալ Մովսիսի Կաղանկատուացւոյ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք, Կ. Վ. Շահնազարեան, Փարիզ 1860, հատ Ա., էջ 183—198։ Agop Manandian, Beiträge zur albanischen Geschichte, Leipzig 1897, S. 44—48 [Գերմ. թարգմ.]։

Վնգ.՝ «Սահմանադրութիւն կա|նովնի Վաջագանայ Աղուանից արքայի եդեալ ի ժո|ղովն, որ յԱղուա|նս եղեւ»։

ա. Թ. 190բբ—191աբ՝ ներածութիւն, շանընթաց հմր. ռմժը։ Սկ. «Յամս Վաջագանա Աղուանից արքայի բազում հակառակութիւնք լինէին ի մէջ Ֆականաց [= աշխարհականաց] եւ եպիսկոպոսաց եւ քահանայից եւ քորեպիսկոպոսաց, ազատաց եւ ռամկաց. ապայ կամ եղեւ ար|քային առնել ժողով յԱղ|ուէն բազմամբոխ յատեան յամսեանն մարերի, որ օր գ.տասան էր։ Ես Վաջագան Աղուանից

արքայ, Շոփեղի|չոյ Պերտեւայ արքեպիսկոպոս, Մանասէ Կապաղակայ եպիսկոպոս, Յովհան Հրոչոյ եպիսկոպոս, Անանիայ եւ Սահակ եւ Ստուփդ եպիսկոպոսք, Յովսէփ Կաղանդա|տուա[ց] երէց, Մատթէ Պար|տ[աւ]այ երէց, Թովմայ թագաւորի դր|ան երէց, Պաւղոս Գայ(ց)է|գուճու երէց, Շմաւոն Ցը|րոյքո եպիսկոպոս, Մատթէ Դարահուճու երէց, Աբայի Կազբեթայ երէց, Ուրբաթայր Մանուչէից երէց, Յովել եւ Պարգմիգէ եւ Յա|կովբ երիցունք, եւ ազատ մարդիկք եւ անհապ(պ)ետքն [= նահապետքն] Արցախա, Բակուր Կաղան|տատուաց նահապետ եւ այլք բա|զումք, որք միաբան առա|ջի իմ եկին ի հանդէս ի Հօ|վոց ի տեղոջս յԱղուէն, կա|րգեցաք այսպէս»։

բ. Թ. 191աբ—193ա՝ կանոններ, շարընթաց հմր.՝ ռմժթ — ռմլը։ Սկ.՝ «Երիցունք որ ի չէնս լինին, երիցս անգամ ի տարւոջն եպիսկոպոսին երկիրպագ[ս]ցեն եւ զկարգս հոգեւորս ուսցին ի նմանէ...» եւն.։ Վջ.՝ «Եւ յետ այնր որչափ տուգանս տա|ցէ մարդն որ ի կանոնադրե|ալ ըստ աւրհնութեամբ արասցեն»։

գ. Թ. 193ա—193աբ՝ Վերջաբան՝ «Զայս պայման արարին եպիսկոպոսքն եւ քահանայքն եւ ազատ մարդիկ առաջի արքային, թէ ի մեր եպիսկոպոսաց եւ յերիցանց եւ յեկեղեցո բերանոյ աւրհնեալ եղիցի թագաւորն թագուհո|վն հանդերձ եւ զաւակովն եւ ամենայն Ֆովս [= աշխարհովս], որ ի յայս ժողովեալ են՝ աւրհնեալ եղիցին։ Եւ զայս հրաման մատենագր|եցին Մուծիկ արքայ եւ հրա|մանատար, Հմիրհօրիկ հազարապետ, ազգապետ Մար|ութ, Տիրազգ, Ըսպրակոս, Շամաբեկուռ, Էռատան, Արշէս, Վարդան քաջ Գարդմանա տէր, Խուսր, Գերմոսան, Խոսկեան, Փիրոգ նա|հապետ եւ ամենայն ազատ Աղուա|նից. վասն առաւել գրոյն Վաջագան արքայի Աղուանից մատանի եդաւ ի վերայ»։

41. Թ. 193աբ—197բա՝ Դուինի ժողովի կանոնները։

Հմմտ. Աբէլ Մխիթարեան, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք, Վաղարշապատ 1874, էջ 86 եւն.։ Angelo Mai, Scriptorum veterum nova colloctio e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 310—312։

Վնգ. «Կանոնք Դվնայ սուրբ ժողովոնյ, զոր ամի չորրորդի Կոստանդիանոսի կայսեր բարեպա|շտութիւն Հռոմ[այեցւ]ոց. այս գիր ի հաստատութիւն գրեցաւ յուղիղ կարգի եւ կանոնաց սրբոյ եկեղեցո, եւ առաջնորդաց եւ ժառանգ|աւորաց, հրամանաւ երա|նելոյն կաթուղիկոսին Հայոց Ներ|սեսի Շինողի եւ այլոց եպիսկոպոս|աց, որոց անուանք գրոշմ|եալ կան գրով ի կատարման կան|ոնացդ. գլուխ ժբ.»։

ա. Թ. 193աբ — 193բա՝ ցանկ։

բ. Թ. 193բբ — 197աա՝ կանոնների, չարընթաց հմր.՝ ոմն — ոմն։ Սկ.՝ «ա. Զառաջնորդաց սրբոյ եկեղեցւո, որ [= այսինքն] է եպիսկոպոսաց, ըստ կանոնի սրբոյ հարցն է գնալ . . .» եւն.։ Վջ.՝ «Եւ որք լսողք լինին, հնազանդք եւ կատարիչք այսմ կանոնի, եւ եղիցին ժառանգաւորք անվախճան կենացն յերկնից արքայութեան յաւիտեանս յաւիտենից, ամէն»։

գ. Թ. 197աա — 197բա՝ Վերջաբան. «Ես Ներսէս չնորհիւն Աստուծոյ նուաստ կաթուղիկոս Հայոց, վասն վերագրեալ կանոնիս ամենայն աթոռակցօք մերովք տուրք եպիսկոպոսօք Հայոց ձեռն արկեալ կնքեցաք ըստ սահմանի հրամանի Հոգւոյն սրբոյ եւ ընտրելոց նորա։ ա. Տէր Յովհաննէս ոստան եւ մարզպետական Հայոց, բ. Տէր Ներսէս Հարքայ եպիսկոպոսապետ, գ. Տէր Քրիստոսատուր Բասենու եպիսկոպոս, դ. Տէր Իսրայէլ Տայոց եպիսկոպոս, ե. Տէր Յովաննէս Մարդաղոյ եպիսկոպոս, զ. Տէր Յոհան Բզնունեաց եպիսկոպոս, է. Տէր Գրիգոր Արշարունեաց եպիսկոպոս, ը. Տէր Սեբէոս Բագրատունեաց եպիսկոպոս, թ. Տէր Գրիգոր Խոսրոտունեաց եպիսկոպոս, ժ. Տէր Սիմէոն Ուշտունեաց եպիսկոպոս, ժա. Տէր Իսրայէլ Վանանդայ եպիսկոպոս, ժբ. Տէր Թէոփիլոս Աշմունեաց եպիսկոպոս, ժգ. Տէր Աստուածատուր Ամատունեաց եպիսկոպոս, ժդ. Տէր Գրիգոր Անձաւացեաց եպիսկոպոս, ժե. Տէր Օգէոս Գնունեաց եպիսկոպոս, ժզ. Տէր Յակոբոս Պալունեաց եպիսկոպոս, ժէ. Տէր Սամուէլ Մեհնունեաց եպիսկոպոս։ Սոյս են տուրք ժողովքն [= ժողովոյն] Հայոց անուանք, որ ի Դուին ժողովեցան ի փառս ամենատուրը Երրորդութեանն»։

42. Թ. 197բա — 201աբ՝ Եղիշէի կանոնները։

Հմմ. Սրբոյ Հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ 1859, էջ 363—368. Angelo Mai, Scriptorum veterum nova collection e vaticanis codicibus edita, X, Romae 1838, 2, p. 312։

8. Թ. 227բա—246բբ՝ Կողոսացոց թղթի մեկնութիւնը:

ա. Թ. 227բա—227բբ՝ Եփրեմի յառաջաբանը:

Հմմտ. Ս. Եփրեմի մատենագրութիւնք, Վենետիկ 1836, հատոր Գ, էջ 165: S. Ephraem Syri Commentarii in epistolas D. Pauli nunc primum ex Armenio in Latinum sermonem a patribus Mekitharistis translati, Venetiis 1893, p. 169.

Վնգ.՝ «Սրբոյն Եփրեմի պատճառք թղթոյն Կողո|սացւոց»: Սկ.՝ «Կողոսացիք աշակերտեալ է Եփրփրեա, այն որ ի նոցանէ, իսկ էր յետ վարդապետութեան սորին ...» եւն. Վջ.՝ «... առ նոսա հեբրայեցիքն հեթանոսօք, առ գրել նոցա յասեն իւրում (յ)ի սկզբան թղթիս այսպէս»:

բ. Թ. 227բբ—228բա՝ Ոսկեբերանի յառաջաբանը:

Հմմտ. Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի, Վենետիկ 1862, հատոր Ա, էջ 522—523:

Վնգ.՝ «Ոսկեբերանին»: Սկ.՝ «Ամենայն թուխթ Պաւղոսի ունի աւելի ինչ, որք ի կապ|անսն գրեցան, որպէս առ Եփեսացւ|ոցն եւ որ առ Փիլիմոն ...» եւն.: Վջ.՝ «... եւ դարձեալ, թէ միայն ի գալըս(ս)տ|եանն իմում, առառ|ել [= առաւել] եւս յորժամ մեկուս[ի] իցեմ»:

գ. Թ. 228բա—246բբ՝ մեկնութիւն։

Հմմտ. Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի, Վենետիկ 1862, հատոր Ա, էջ 525—672։

Սկ.՝ «Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի (յի՛ քի՛) կամաւքն Աստուծոյ։ Պարտ է նախ զպա|տճառ թը[ղ]թիս ասել, զոր եւ աստէն իսկ ի թխթիս . . .» եւն.։ Վջ.՝ «. . . զի վասն անուանն ար|ժանի եղեն անարգելոյ»։

9. Թ. 246բբ—263բբ՝ Թեսաղոնիկեցոց առաջին թղթի մեկնութիւնը։

ա. Թ. 246բբ—247աբ՝ Եփրեմի յառաջաբանը։

Հմմտ. Ս. Եփրեմի մատենագրութիւնք, Վենետիկ 1836, հատոր Գ, էջ 176։ S. Ephraem Syri Commentarii in epistolas D. Pauli nunc primum ex Armenio in Latinum sermonem a patribus Mekitharistis translati, Venetiis 1893, p. 179։

Վնգ.՝ «Հաւրն Եփրեմի պատճառ Թեսաղոնիկացոց առաջին թղթին»։ Սկ.՝ «Պաւղոս իբր|եւ հալածեց|աւ ի քաղաքէ անտի ի Փիլիպեցոցն, եկն նա ի քաղաքն . . .» եւն.։ Վջ.՝ «. . . այլ վասն ոմանց ի նոցանէ զի հանգուցեալ էին նոքա, առ գրել նոցա առաաքեալն Պօղոս յԱթէնսն յասելն իւրում»։

բ. Թ. 247աբ—247բա՝ Ոսկեբերանի յառաջաբանը։ Վնգ.՝ [լուսանցքում] «Ոսկեբերանի»։ Սկ.՝ «Ընդէ՞ր այսպէս, յորժամ առ Փիլ|իպեցիսն գրէր զՏիմէ|թեոս, որ առ իւր ունէր՝ ընդէր ոչ գրեաց որ ծան|աւթ . . .» եւն.։ Վջ.՝ «. . . որչափ եւս առօել [= առաւել] ինքն զնոյն խնդրէր եւ ի նոյն փութար»։

գ. Թ. 247բա—263բբ՝ մեկնութիւն։

Հմմտ. Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի նպիսկոպոսապետի մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի, Վենետիկ 1862, հատոր Բ, էջ 433—462։

Սկ.՝ «Պաւղոս եւ Սիւղանոս եւ Տիմոթէոս։ Հայեաց դու եւ տես, զի խոնարհութեամբ իւրով մոռացաւ նա զա|նուն . . .» եւն.։ Վջ.՝ «. . . վասն երդմանցն արասցեն զպ|ատուէրն քարոզի մեծ երկիւ|ղ էր նոցա յիրացն»։

դ. Թ. 263բբ վերջաբան՝ «Առ Թեսաղոնիկեցիս առաջ|ին թուխթ գրեցօ [= գրեցաւ] յԱթէնսն. տունք ճ՛ղ՛։

10. Թ. 263բբ—276աբ՝ Թեսաղոնիկեցոց երկրորդ թղթի մեկնութիւնը։

ա. Թ. 263բա—264աբ՝ Եփրեմի յառաջաբանը։

Հմմտ. Ս. Եփրեմի մատենագրութիւնք, Վենետիկ 1836, հատոր Գ, էջ 184։ S. Ephraem Syri Commentarii in epistolas D. Pauli nunc primum ex Armenio in Latinum sermonem a patribus Mekitharistis translati, Venetiis 1893, p. 190։

Վնգ.՝ «Սրբոյն Եփրեմի երկրորդ թղթոյն Թեսաղ|ոնիկացւոց»։ Սկ.՝ «Իբրեւ ընգալան Թեսաղոն|իկեցիքն զկնի այսրն զթու|խթն առաջին եւ ընթե|րցան ի մէջ ժողովրդե|անն, որպէս եւ հրամայե|ցաւ նոցա . . .» եւն.։ Վջ.՝ «. . . ի ձեռն այնոցիկ, որ ա՛ [= ամենայն] խնդութեամբ քարոզէին զնա առ գրել նոցա այսպէս»։

բ. Թ. 264աբ—265բբ՝ Ոսկեբերանի յառաջաբանը։ Վնգ.՝ «Ոսկեբերանին»։ Սկ.՝ «Ասաց առաջին թղթին թէ աղաւթս առնեմք ըզ|ցայդ եւ զցորեկ տեսան|ել զձեզ եւ թէ չունիմք . . .» եւն.։ Վջ.՝ «. . . այնպէս եւ նորին արբ|ենէակն [= արբանեակն] հպարտութեամբ վարեսցէ չարութեամբ»։

գ. Թ. 265բբ—276աբ՝ մեկնութիւն»։

Հմմտ. Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի, Վենետիկ 1862, հատոր Բ, էջ 462—465։

Սկ.՝ «Պաւղոս եւ Սիւղիանոս եւ Տիմէ[թեոս]։ Որչափ ի|նչ դըսրովեալ եւ խո|տեալ ամօթալից էին հեթանոսք. զի ի վերայ մոլոր|ութեան եւ խաբէութեանն իւրեանց ի սուր եւ ի սա|տակումն . . .» եւն.։ Վջ.՝ «. . . . ոչ ոք կարէ լսել եւ իմա|նալ զի ատելի բանս թղթոց նոցա»։

դ. Թ. 276աբ՝ Վերջաբան՝ «Առ Թեսաղոնիկից[ի]սն երկրորդ գրեցաւ յԱթենա. տունք ճ՛ղ».

11. Թ. 276բա—331բա՝ Եբրայեցոց թղթի մեկնութիւնը։

ա. Թ. 276բա—276աբ՝ Աղէքսանդրիայի Եւթաղի եպիսկոպոսի յառաջաբանը։

Հմմտ. Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենական հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ։ Նորոգապետ ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափառէ համեմատութեամբ այլ և այլ օրինակաց, հանդերձ կարևոր ծանօթութեամբ բնաբանին։ Յաշխատասիրութենէ Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի . . . , Վենետիկ 1805, հատոր Դ, էջ 503։ Գիրք աստուածաշունչք հին և նոր կտակարանաց, ըստ միաբան վաղեմի գրչագրոց մերոց և յոյն բնագրաց, Վենետիկ 1860, էջ 1171։ C. Conybeare, Journal of Philology, 1895, p. 241—259. J. A. Robinson, Euthaliana-Studies of Euthalius . . . and the Armenian Versions, London 1895։

Վնգ.՝ «Եթաղեա պատճառ Եբրայեցոց»։ Սկ.՝ «Եբրայեցոց թուխթս թուի թէ չիցէ Պօղոս, վասն նըկարագրին եւ վասն ոչ . . .» եւն.։

Վջ.՝ «. . . որպէս եւ ինքն ընթելծուա|ծս [= ընթերծուածս] յառաջ մատու(ցեցու)ց|անէ»։

բ. Թ. 276բբ—278բբ՝ Եփրեմի յառաջաբանը։

Հմմտ. Ս. Եփրեմի մաթենագրութիւնք, Վենետիկ 1836, հատոր Գ, էջ 194։ S. Ephraem Syri Commentarii in epistolas D. Pauli nunc primum ex Armenio in Latinum sermonem a patribus Mekitharistis translati, Venetiis 1893, p. 200։

Վնգ.՝ «Եփրեմի սուրբ հաւրն»։ Սկ.՝ «Ի սկզբան իսկ թղթիս ծուփս եւ խնդիր ա|նգաւ, գիտել ճան|աչել վասն էր ապա յամենայն թուխթս իւր, եւ ասա ոչ գրեաց . . .» եւն.։ Վջ.՝ «. . . համա|րէին նոքա, ասէ ի սկիզբն թըղթին իւրոյ, սոսա։

գ. Թ. 278բբ—280բա՝ Կիւրեղ Աղէքսանդրացու մեկնութիւնը։

Հմմտ. J. P, Migne, Patrologiae cursus completus, Ser. I, tom. 74, pag. 773—1006։ S. P. N. Cyrilli archiepisc. Alex. in D. Joannis evangelium. Accedunt fragmenta varia necnon tractatus ad Tiberium diaconum duo. Edidit post Aubertum Ph. Ed. Pusey, Oxonii 1872, III 173—440.

Վնգ.՝ «Կիւրղի է»։ Սկ.՝ «Եւ ի վերայ լերին բարձեւ աւետարանիչդ Սիոնի բա|րձրացուցէք մի երկինչ|իք ասաց քաղաքդ Յուդա ահաւասիկ Աստուած ահա Տէր։ Պարտ էր թէ որ զբա|ն պատգամացն Աստուծոյ քարոզեաց Ֆի [= աշխարհի] ի զանգիտելոյն . . . .» եւն.։ Վջ.՝ «. . . լինէր Քրիստոսի չնորհացն աւգ|նականութեամբ սկըզբան արարից ասել»։

դ. Թ. 280բա—281աա՝ Որոգինէսի յառաջաբանը։

Հմմտ. Եւսեբիոսի Կեսարացւոց պատմութիւն եկեղեցւոյ յեղեալ յասորւոյն ի հայ, պարզապանեալ նոր թարգմանութեամբ ի յոյն բնագրէն, ի ձեռն Հ. Աբրահամ Վ. Ճարեան, Վենետիկ 1877, էջ 473—474։ Eusebius Kirchengeschichte, Buch VI und VII, aus dem Armenischen übersetzt von Erwin Preuschen, Leipzig 1902 [Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Litteratur, hgg. v. O. v. Gebhardt und A. Harnack, N. F. VII 3] S. 33—34։

Վնգ.՝ «Որոգի|նեաց [= Որոգինեայ] յեկեղեցական պատմ|ութեանցն այլ պատճառք թղթին Եբրայեցւոց»։ Սկ.՝ «Բայց ասաց նա դարձեալ վասն թըղթոյն Հեբրայեցւ|ոց, յորժամ թարգմանէր նա եւ եթէ տիպք բանի թղթոյն Հեբրայեցւոց ոչ է տըղ|էտ . . .» եւն.։ Վջ.՝ «. . . ի հեբրայեցի լեզու եւ թարգմանեաց զնա Կըղե|մէնտես ի յոյն անդր»։

ե. 281աա—284աբ՝ Ոսկեբերանի յառաջաբանը։ Վնգ.՝ «Ոսկեբերան վարդապետին»։ Սկ.՝ «Հռոմէացոցն գրէ եր|անելին Պօղոս։ Յոր|չափ ժամանակս իցեմ հեթանոսաց առաքեալ, զպաչտօն իմ փառօոր [=

փառաւոր] առնեմ . . . .» եւն.։ Վջ.՝ «. . . . այնոցիկ որք երկայն մըտութեամբ ժառանգեցին զօետիսն [= զաւետիսն]։

զ. Թ. 284աբ—331բա՝ մեկնութիւն։

Հմմտ. Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի, Վեն. 1862, հատ. Բ, էջ 466—567։

Սկ.՝ «Բազում մասամբ եւ բազում աւրինակօք կանխեաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէիւք։ Ընդէ՞ր չեդ զա|նձն հանգոյն մարգարէիցն . . .» եւն.։ Վջ.՝ «Շնորհք ը [= ընդ] ամենեւին ձեզ ամ|ենեցուն առ հասարակ մեծի եւ փոքու, առն եւ կնոջ, ծառայի եւ տեառն, ծերոյ եւ տըղոյ»։

է. Թ. 331բա՝ վերջաբան՝ «Առ Եբրայեցիս գրեցաւ [յ]Իտալիայ ի ձեռն Տիմոյթեայ. տունք չգ»։

12. Թ. 331բբ—348բա՝ Թիմոթէոսի առաջին թղթի մեկնութիւնը։

ա. Թ. 331բբ—332աա՝ Եփրեմի յառաջաբանը։

Հմմտ. Ս. Եփրեմի մատենագրութիւնք, Վենետիկ 1836, հատոր Գ, էջ 234. S. Ephraem Syri Commentarii in epistolas D. Pauli nunc primum ex Armenio in Latinum sermonem a patribus Mekitharistis translati, Venetiis 1893, p. 243։

Վնգ.՝ «Սուրբ հաւրն Եփրեմի պա|տճառ առաջի թըղթոյն Տիմէթէ|եա իմաստնոյ»։ Սկ.՝ «Առաքեալ զՏիմեթեոս յղեաց առ Եփեօ|ցիսն վասն ոմ|անց, որ ի Հեբրաեցւոց ա|նտի խռովեց(ուց)ուցանէին զնոսա . . .» եւն.։ Վջ.՝ «. . . շրջիլ ի տուն Աստուծոյ. զի նա ինքն է եկեղեցի Աստուծոյ [յ]ասելն իւրում այսպէս»։

բ. Թ. 332աա—333աա՝ Ոսկեբերանի յառաջաբանը։

Հմմտ. Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի, Վենետիկ 1862, հատ. Ա, էջ 1—3։

Վնգ.՝ «Ոսկիբերանին»։ Սկ.՝ «Յեօթանասնից առաքելոցն էր Տիմէթէոս. եւ վկայէ Ղու|կաս, եթէ զարմանալի էր մանուկն . . . .» եւն.։ Վջ.՝ «. . . . որ օտարոտիսն ուսուցանեն, այլ թէ պատուէր տայր նոցա մի օտարապէս ինչ ուսուցանել զայսպիսի»։

գ. Թ. 333աա—348բա՝ մեկնութիւն։

Հմմտ. Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի, Վենետիկ 1862, հատ. Ա, էջ 3—167։

Սկ.՝ «Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի ըստ հրամանի փրկչին մերոյ Աստուծոյ։ Մեծ է պատիւ առաքել|ոցն, մեծ եւ կարի զարմանա|լի. Եւ ամենայն ուրէք տեսանեմք զՊաւղոս . . .» եւն.։ Վջ.՝

«Ընդէր զի ի հօատոցն [= հաւատոցն] հանեն եւ ոչ տան կալ հաստատուն: Շնորհք ընդ ձեզ իբրեւ ըզ|կնիք ի վերա դնէ. զի որ շնոր|հք Աստուծոյ են ամենայն ինչ բարեաց լինի»:

դ. Թ. 348բա՝ վերջաբան՝ «Առ Թիմէթէոս թուխթ առաջին գրեցաւ ի Լաւոնդիկայ, որ է մայրաքաղաքաց Պաղեստան|ացւոց. տունք մ̅լ̅բ»:

13. Թ. 348բա—362աբ՝ Թիմոթէոսի երկրորդ թղթի մեկնութիւնը:

ա. Թ. 348բա—349աա՝ Եփրեմի յառաջաբանը:

Հմմտ. Ս. Եփրեմի մատենագրութիւնք, Վենետիկ 1836, հատոր Գ, էջ 247:
S. Ephraem Syri Commentarii in epistolas D. Pauli nunc primum ex Armenio in Latinum sermonem a patribus Mekitharistis translati, Venetiis 1893, p. 256:

Վնգ.՝ «Սրբոյն Եփրեմի պատճառք երկրորդ թղթոյն Տիմոթիայ»: Սկ.՝ «Պաւղոս ծանե|աւ հոգովն որ է ի նմա, թէ մերձեալ է ժամանակ վաղճանի իւրոյ ....» եւն.: Վջ.՝ «Արդ վասն այսր եւ վասն այլոց գրէ նա ի Հռոմ քաղաքէ առ Տիմէթէոս յարելն [=յասելն] իւրում այսպէս»:

բ. Թ. 349աա—349բա՝ Ոսկեբերանի յառաջաբանը:

Հմմտ. Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի, Վեն. 1862, հատ. Ա, էջ 168—169:

Վնգ.՝ «Ոսկեբերանին»: Սկ.՝ «Զիա՞րդ իցէ երկրորդ թուխթ գրէ առ Տիմէթեոս. վաղվաղ|ակի գալ առ նա եւ չեղեւ գալ, մխիթարէ ....» եւն.,: Վջ.՝ «Եւ արդ զայս ամենայն կամի յարդարել եւ մխիթար|ել յիւրոց փորձութեանցն»:

գ. Թ. 349բա—362աբ՝ մեկնութիւն:

Հմմտ. Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի, Վեն. 1862, հատ. Ա, էջ 169—278:

Սկ.՝ «Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաւքն Աստուծոյ ը̅ [= ըստ] աւետեաց կենացն, որ ի Քրիստոս Յիսուս: Անդէն վաղվաղակի ի սկը|զբանն քըրքեաց զու|արճացոյց զմիտս նորա ...» եւն.: Վջ.՝ «... զի ցա|նկ շնորհս ընդունիցիմք հա|նդերձ առաջին շնորհաւքն, յորժամ այն լինիցի չէ ինչ որ արտմէ ցուցանէ»:

դ. Թ. 362աբ՝ վերջաբան՝ «Առ Տիմոթէոս երկ|րորդ թուխթ, որ էր Եփեսացւոց եկեղեցոյն եպիսկոպոս ձեռնադրեալ առաջին, գրեցաւ ի Հռոմէ, յոր|ժամ երկրորդ անգամ եկաց յԱտե|նի Պաւղոս առաջ ի Ներոնի կայսեր Հռոմայ. տունք ճ̅»:

14. Թ. 362բա—370բբ՝ Տիտոսի թղթի մեկնութիւնը:

ա. Թ. 362բա—362բբ՝ Եփրեմի յառաջաբանը:

Հմմտ. Ս. Եփրեմի մատենագրութիւնք, Վենետիկ 1836, հատոր Գ, էջ 259:
S. Ephraem Syri Commentarii in epistolas D. Pauli nunc primum ex Armenio in Latinum sermonem a patribus Mekitharistis translati, Venetiis 1893, p. 269:

Վնգ.՝ «Սրբոյն Եբրեմի պատճառք Տիտոսի»: Սկ.՝ «Պաւղոս եթող ի Կը|րիտէ զՏիտոս իբրեւ զվերակացու եւ զեպիսկոպոս, զի շըրջեսցէ եւ կացուսցէ երիցունս ի քաղաքս քաղաքս ...» եւն.: Վջ.՝ «Արդ վասն այսորիկ եւ որ ինչ նման է սոցին, առ նա գրել առ Տիտոս յասելն իւրում այսպէս»:

բ. Թ. 362բբ—363աբ՝ Ոսկեբերանի յառաջաբանը:

Հմմտ. Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի, Վեն. 1862, հատ. Ա, էջ 279—280:

Սկ.՝ «Քան զամենայն որ ընդ Պաւղոս էին, առաւել ը̅ [= ընդ] ի տէր Տիտոս. եթէ ոչ այս|պիսի ինչ ոք էր, ապա ոչ ի|սկ յանձն առնէր ...» եւն.: Վջ.՝ «... յայտ ա|ռնէ թէ չեւ եւս էր մտեալ ի բանդ. քանզի անդ զանձն յաճախ կապեալ կոչէ: Եւ այդ զինչ ասիցէ»:

գ. Թ. 362աբ—370բբ՝ մեկնութիւն:

Հմմտ. Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիկկոպոսապետի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի, Վեն. 1862, հատ. Ա, էջ 280—341:

Սկ.՝ «Պաւղոս ծառայ առաքեալն Քրիստոսի: Տես, զիարդ անխտիր դնէ զ|այս. երբեմն զանձն ծառայ Աստուծոյ կոչէ ...» եւն.: Վջ.՝ «Արդ ոչ այս է պըղծութիւն, այլ որ ի մեղացն է, ասէ Տեր. վա|ճառեցէք զինչս ձեր եւ տուք ողորմութիւն եւ ահա ամենայն ինչ սուրբ է ձեր»:

դ. Թ. 370բբ վերջաբան՝ «Առ Տիտոս Կրետացուցւոց եկեղեցւոյն առա|ջինն ձեռնադրեալ եպիսկոպոս գրեցաւ ի Նիկիայ»:

15. Թ. 370բբ—375բա՝ Փիլիմոնի թղթի մեկնութիւնը:

Վենետիկի հրատարակութեան մէջ պակաս է:

ա. Թ. 370բբ—372բա՝ յառաջաբան: Վնգ.՝ «Յովհաննու Ոսկեբերանի վարդապետին պատճառ թղթոյն Փիլիմոն իմաստասիրի»: Սկ.՝ «Նախ կարեւոր համարի|մ ասել զպատճառս թղթոյս եւ ապա զխնդիրսն եւ զինչ իցէ խնդիրքն: Փիլիմոն էր այր մի ի հաւատ|ացելոցն ...» եւն.: Վջ.՝ «... ուստի որչափ շահս շա|հեցաք եւ դարձեալ շահելոց ե|մք յաւծուածքս աւկ|տակար բանից»:

բ. 372բ—375բ՝ մեկնութիւն։ Սկ.՝ «Պաւղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի եւ Տիմէթէոս եղբայր. վասն ծառայից առ տէր է այս։ Այսրէն ի սկզբանս վաղվաղակի ցածուցանէ զպատմութիւն...» եւն.։ Վջ.՝ «... փառք եւ պատիւ եւ զօրու|թիւն յաւիտեանս. ամէն»։

գ. Թ. 375բ վերջաբան՝ «Առ Փիլիմոն Եապրիայ տեարս ...» եւն.։

16. Թ. 375բ—376աբ՝ Յիշատակարան։

«Փառք անեղին աստուած|ութեանն,
որ անը|սկիզբն եւ անվաղ|ջան
եւ միշտ եւ է առանց թուական
չունի ըսպառումն կատարման.
ձըգեաց զե|րկին որպես խորան
եւ հաս|տատեաց առանց հիման
եւ լուսաւորս բազմազան,
առանց ուրուք միշտ ընթանան.
զհրեշտակս յերկի|նս ետ փառաբան,
ըզ|մարդիկ յերկիրս գործակ|ան,
պատճար լինել աստ չինութեան
մինչեւ մահու|ամբ ի հող դառնան.
յորոց եւ մինն, ես անպիտան
Կողոնացի տեղեաւ բնական,
Գրիգոր կոչիմ ես՝ անուան,
ի սուրբ գործոց զիրկ եւ ունայն.
քանզի գործովս եմ զիրկ եւ ունայն
եւ չար գործովս եմ անարժան
եւ ձեւս ունիմ քահանայութեան
դարձայ մեղաց ըշտէմարան.
եւ Աստուծոյ ինչ տամ պատասխան.
ձեզ աղաչեմ, հարք սրբազան,
որք հանդիպէք երգոյս Պաւղոսեան
եւ վարդապետ|ին քաջ իւր անուան
Ոսկիբերան վարդապետի Յոհանիսեան
եւ իմաստուն եւ ճարտարասան,
ի սուրբ գրոց է հմտական,
չնոր|հք առեալ աստուածութեան
մեկնեաց զգիրս զանազան
ան|ուշահոտ վարդի նման.
ի հոտ առնէք իմս մարդկան
եւ զուարճանա, որք ընթեռնու[ն] եւ կարդան.

գծող գրիս առնէք արժ|ան
խիստ ծերացեալ է եւ անպիտան,
որ է աւ|ուրքս թանասեան.
սա գեղեցիկ է եւ բուրաստան.
անտես չառնէք զիս (զիս) նախատեան,
զիս արժանի առնէք յիշման
առ արարիչն անմահ արքայն։

Աստանօր անկեալ կատարեցաւ այս աստուածաշունչ գիրքս ի քաղաքս Կողոնիայ ի դու|ռն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Ըս|տէփաննոսի նախավը|կային ամենայն սրբոցն, որ կան հաւաքեալ։ Գրեցաւ եւ ծաղկեցաւ եւ կատարեցաւ ձեռամբ անարժան Գրիգոր իրի|ցու ի դառն եւ ի նեղ ժա|մանակիս, որ այս ամի պատեալ կան արիա|կան ազգն եւ Ըռուս|եաց ազգն ծովով եւ ցամաքով շրջապա|տեալ կան եւ Տաճկաց ազգն անիզեր ելեալ, գնացեալ Ֆռանկաց զաւրացն ի վերայ գիտելին Աստուծոյ, թէ ի՞նչպէս պիտի որ լինուք. ապա ես արժ|անս(ս) գրէի զայս Պաւղոս գիրքս, որ ամէ|նեւին զգայարանքս կորուսեալ էի անմեղ|ադիր լերուք սղալան|եացս մեր, որ ի ծերութեան ժամանակիս գրեցի։ Խնդ|րեմ ի ձեզանէ որ ըզ|թերին լնուք եւ զաւելօր|դն բառնաք։ Գրեցաւ սա որ ունի տարիս այծ|եղջիւր եւ ամիսս աւգո|ստոսի ի՞ր աւրն գիշերի ի թվականից Հայոց ՌՂԵ, որ աւրհնեալ յաւիտեանս. ամէն։ Հայր.»։

17. Թ. 376բ՝ յիշատակագրութիւն։ «Ես նուաստ ծառայ Քրիստոսի Մինաս վարկապետս, առաջնորդ Անկուրիոյ քաղաքին, զայս գիրքս ստացեալ ունէի հա|լալ վաստակոց իմոց։ Իսկ ի թուին ՌՃԺԳերորդի եկն առ մեզ նուիրակ սուրբ Էջմիածնայ բարերջանիկ եւ սիրելի եղբայրն մեր Տաթեւացի Մինաս վարդա|պետն, որ եւ ըստ սիրոյն իմոյ, զոր ունէի առ նա, զայս փոքր ընծայ, որ է մէկնիչ Պօղոսի առաքելոյն, նմա ի վայելումն անձին իւրոյ յի|շատակ յաւիտենական պարգեւեցի. որքան կենդա|նի իցէ վայելեսցէ. եւ յետ նորա ում եւ կամի բաղխել կամ կտակագրով հաստա|տել, կամք իւր եղիցի. վասն զի իւր սեփական է այս գիրքս։ Գրեցաւ ի յԱն|կուրիոյ վանքն ՌՃԺԳ յուլիսի Ի»։

* * *

ՀԱՄԱՐ 7.

ԹԵՐԹ 316 եւ 2 կազմի մագաղաթեայ թերթ [դաստարկ 10ա եւ 310բ]։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ 19×12 սմ. [գրութիւն միասիւն 13×7,5 սմ.]։ — ՏՈՂ 20 [նախ ճնշմամբ հորիզոնական գծուած, ապա յղկուած, կարմիր թանաքով ուղղահայեաց գծուած]։ — ՆԻԻԹ թուղթ։ — ԳԻՐ նօտրագիր։ — ՎԵՐՆԱԳԻՐ եւ ՍԿԶԲՆԱԳԻՐ կարմիր։ — ԿԱԶՄ փայտեայ, կաշեպաս։ — ԹՈՒԱԿԱՆ 1699—1700. տես թերթ 124բ եւ 309բ։ — ՏԵՂ Նորաշեն։ — ԳՐԻՉ Մովսես քահանայ. հմմտ. II 4 եւ III 6։ — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ 122բ—125ա, 126ա, 307ա—310ա։ — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ 2ա մի կնիք։ — ՎԻՃԱԿ ընդհանրապես լաւ։

ՄԱՏԵԱՆՍ Է

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՅՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆԴՐԷԱՍ ԿԵՍԱՐԱՑՈՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

I. Թ. 1ա՝ *Յիշատակագրութիւն։* Հմմտ. IV.

«*Աւգնեա սուրբ Հոգի Աստուած։ Յիշատակ է երգ երգոց եւ տեսլեանն Յովհաննու մեկն|ութիւնքս Յովհաննէս վարդապետին Նորաշինկեցւոյ ի վայելումն սուրբ յանապատին Շատիկու։ Աղաչեմ, հարք եւ եղբարք, յիշ|եսջիք մեղապարտ գիրիս*»։ Հմմտ. II 5 եւ V։

II. Թ. 1ա—125բ՝ *Գրիգոր Նարեկացու երգոց երգոյն մեկնութիւնը։*

Հմմտ. *Մեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի յօրինեալ ի Ս. Գրիգորէ Նարեկացւոյ պարզ ոճով եւ իմաստալից բանիւ եւ գեղեցիկ հայկաբանութեամբ*, Վեն. 1789։ *Գրիգոր Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք*, Վեն. 127, էջ 389—487։ *Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատէնագրութիւնք*, Վենետիկ 1840, էջ 271—366։ Carl Friedrich Neumann, Versuch einer Geschichte der armenischen Literatur, Leipz. 1836, S. 130. [*Գարեգին Զարպհանալեան*], *Հայկական հին դպրութեան պատմութիւն*, Վեն. 1897, էջ 543—544։ F. Nève, L'Arménie chrétienne et sa littérature, Louvain 1886, p. 256—268. P. C. Thoros, St. Grégoire et ses œuvres, *Բազմավեպ* 1874, էջ 244—250։

Վնգ.՝ «*Մեկնութիւն երգոց երգոյն Սո|ղոմոնի արքայի որդւոյ Դաւթի արարեալ Տեառն Գրիգորի Նարեկա|ցւոյ հոգեշնորհ վարդապետին որդւոյ Տեառն Խօսրովու ի խնդրոյ Համազասպ թագաւորի Հայոց, որ էր յոյժ երկիւղած եւ ընթերձասէր [գ]ոլով եւ յոյժ ցանկածեալ յայսմ հոգեխառն տառի ետ աղա|չանօք մեկնել զսա*»։

1. Թ. 1ա—11ա՝ *Յառաջաբան։* Սկ.՝ «*Հրաման քո աստուածասէր թագաւորութեանդ, ո՛վ տէր արքայ, բուռն եւ աւելի էր քան զկար մեր. զի այդպիսի խնդիր, մեկնել զերգ երգոց երգոյն Սողօմոնի՝ այնոցիկ է, որ ըստ Սողոմոնին էր հո|գւովք։ Զի եթէ Նիւզացին Գրիգոր, որ կատարեալ վարդապետ էր ....*» եւն.։ *Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք*, Վեն. 1840, էջ 271—277, 9 «*.... ի Քրիստոսի սէր եւ եկեղեցւոյ որ առ միմե|անս*» [Թ. 8ա], յետոյ՝ «*... որպէս եւ ասէ թէ՝ ես իսկ եմ երգ սաղմոսարանի։ Եղկու իրս լսի բանս ....*» եւն., *Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի ....* եւն., Վեն. 1840, էջ 278, 33—280՝ «*... Եւ կայր այս օրհ|նութիւնք յօրհնութեանցն։ Այսու զԴաւթա բանսն հօր իւրոյ բերէ վկայ, թէ՝ Տէր ասաց ցիս. որդի իմ ես դու, եւ ես այսօր ծը|նայ զքեզ*»։ [Թ. 9բ], յետոյ՝ [Թ. 10բ—11ա] «*.... զմուսալից։ Թագաւորեալ մարմին միանալովն ի [= ընդ] Աստուծոյ Բանին ...*» եւն., մինչեւ «*... դարձեալ շնորհեաց մեզ իւրով իսկ կամաւոր մահուամբն*»։, *Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի ....* Վենետիկ 1840, էջ 278, 5—32։

2. Թ. 11բ—121բ *մեկնութիւն։* Վնգ.՝ «*Երբ երգոց, որ է Սօղօմոնի*»։ Սկ.՝ «[*Ս*]*օղօմոն՝ խաղաղութիւն թարգմանի, որով ա|ռաքէ զՔրիստոս. զի նայ է խա|ղաղութիւն մեր, որպէս եւ առաքեալ ասէ։ Արդ քանզի ծնաք նոր ծնունդ, աղաչեմք ...*» եւն.։ Վջ.՝ «*... Այժմ աւարտեսցուք զբանս մեկնութեան եւգոյ երգոցս, եւ ասաս|ցուք զրո Աստուածաբանն ասաց յիշելն. որոց եւ մեք հաղորդեսցուք, որ մեկնե|ցաքս զայսոսիկ, եւ որ[ք] ուսանիքդ ի նոյն ինքն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, յո- բում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Եւ դարձեալ եւս յաւէտ փառք եւ գոհութիւն, պատիւ եւ յերկրպագութիւն շնորհաբաշխ եւ առատաձիր ստեղծօղին եւ զարդա|րողին մերոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի հանդերձ Հարբ եւ ամենասուրբ Հոգովն յաւիտեանս յաւիտենից. ամէն*»։

3. Թ. 121բ—123ա՝ *Գրիգոր Նարեկացու յիշատակարանը*»։ «*Ի չորս հարիւր եւ ի քսան եւ չորս ամին թուահաշութեանս եւ ի թագաւորութեանս Հայոց հար|կեցայ ես Գրիգոր քահանայ ի Նա|րեկայ, որդի տեառն Խոսրովու Անձիացեաց եպիսկոպոսի, ի Գուր-*

գենայ աստուածասէր եւ քրիստոսապսակ արքայէ՝ որդ|ւոյ Աբուսահլի Համազասպ թագաւորի՝ առ ի մեկնութիւնս յահաւոր բանիցն Սաղօմոնի, որ կոչի Երգոց երգ, բա|ցայայտել զխորին ծածուկսն որ ի նոսա, որ են յոյժ քաղցր եւ կարի պիտանի առ ի լսել եւ ի միտ առնուլ։ Վասն զի զփեսայ է եւ զհարսն է ասէ, որ եւ զստեանց եւ [թ. 122ա] զկարմրացեալ շրթանց, եւ զայտից գեղեցկութենէ եւ զաչաց ցանկալեաց զքեռ եւ զեղբօր որդւոյ եւ զօրի|որդաց եւ այլոց ամենից այսպիսեաց բանից առփականաց եւ սրտից խտը|տանաց սեռն սիրոյ եւ շաղկապ միա|ւորութեան։ Զոր լուեալ մարդկան ան|իմանալեօք մտովք, այլ եւ այլ իրս իմա|նային։ Եւ ապա ի հոգս եւ ի տարակուսանս եղեալ՝ բարեպաշտ եւ քրիստոսա|սէր թագաւորն յայսպիսի իրի յղէ ա|ռ իս միանգամ եւ երկիցս, որում ոչ իշխեցի ԸՆդիմանալ [= ընդդիմանալ], զի ծանեայ եթէ աստուածահաճոյ է հրամանն. եւ ապա ա|պաւինեալ յամենասուրբ Հոգին Աստուած մեկնե|ցի, զերգս երգոցն Սաղօմոնի ըստ նորին հայցմանց եւ խնդրանանցն։ Զի թէպէտ եւ աւելի գործ եւ առաւել քան զկար իմ առ ի տկար անձամբ առ յերկիւ|ղի անհնազանդութեան, զի մի զթագաւորական [թ. 122բ] հրամանն անկատար մնասցէ. սակայն յոյժ յանդգնութիւն էր ինձ այս եւ բա|զում բամբասանաց արժանի յամենեցունց. Նաեւ յաստուածային կողմանէն պատեաց ակնկալիք. բայց յերկոցունց կողմանէ, զաստուածայնոյն եւ զմարդկայ|նոցն, զթագաւորական հրամանն առաջի կա|լեալ կարծեմ արդարանալ։ Վասն զի իւր եւ իսկ Քրիստոսի փրկչին մերոյ հրաման է հնազանդ լինիլ թագաւորաց իբրեւ զԱստուծոյ, եւ որ հնազանդի, Աստուած իւրն համարի. եւ որ անհնազանդ գտանի, զայն եւս Աստուած իւրն համարի։ Զոր եւ աղաչեմ իսկ առ ընթերձասէրսդ, մի մեղադրանս յաւելուլ ինձ յաղագս ձեռնարկութեան ի ծանր գործ այս, որ առաւել էր քան զար|ժանն իմ, զի ըստ հարկապահանջ խնդ|րողին ոչ կարացի վերջացեալ գտանիլ, յուսալով իմ ամենազօր սուրբ Հոգին Աստուած զմտաւ ածելով, թէ ոչ անտես [թ. 123ա] առնէ զաղաչօղսն առ նա, սկիզբն արարի աղօթիւք եւ արտասուօք խնդ|րել ի նմանէ, որ եւ նայեցեալ զանարժանութիւնս իմ եւ զսրտեռանդն կամսն հայցողին, եբաց զբերանս իմ յասել եւ համա|ռօտել զսա ի փառս ամենասուրբ Երրորդու|թեանն եւ զմի Աստուածութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբայ, որ փառաւորեալն է յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից։ Ամէն»։

4. Թ. 123ա—123բ՝ Գրչի յիշատակարանը։ Հմմտ. VII 6։ «Եւ արդ ես անարժան եւ անիմաստ զվերջին գրօղ եւ զստացօղ սուրբ գրոյս

Մովսէս մեղապարտ եւ սեւերես քահանայս, անկարգս ի կարգս կոչեցելոց եւ անար|գս ի դասս ընտրելոց, Աստուծո(յ)վ ըսկսեալ գրեցի զսա ի դառն եւ ի նեղ ժամանակիս եւ ի յիշատակ հոգւոյ իմոյ թողի, նաեւ ծնօ|ղացն իմոց Ալեքսանին եւ Շնորհաւորին, եւ եղբարցն իմոց հանգուցելոցն ի Տէր, եւ [123բ] որդոյն իմոյ Ալէքսան դպրի, եւ այլ ամենայն արեան մերձաւորացն իմոց եւ հոգեւոր ծը|նօղացն։ Ես անարժան Մովսէս քահանայս երեսանկեալ աղաչեմ առ ընթերցօղսդ եւ որք օգտիք ի սմանէ, կարդալով եւ կամ օրինակելով, Հայրմերորիւ յիշատակել մի խնայէք։ Յիշօղքն յիշեալք լիցին զՏեառնէ մերմէ եւ զՓրկչէն Յիսուսէ Քրիստոսէ յաւուրն յահեղին։ Ամէն. եղիցի եղիցի։ Արդ գրեցաւ սա ի թուահաշւութեանս Հայոց ռ̅ճ̅խ̅ եւ ութն ամին յամ|սեանն մայիսի ԺԸ ի գեօղն Նորաշէն Ը [= ընդ] հովանեաւ սուրբ Աստուածածնի, սուրբ Կարապետի եւ սբբոյն Ստեփաննոսի նորընծայ սուրբ տա|ճարիս. առաջնորդութեան մերոյ տեառն Մատթէոսի արհի եպիսկոպոսի»։

5. Թ. 123բ՝ Յիշատակագրութիւն [առաջին յիշատակագրութեան [I] գրչի ձեռքով]։ «Եւ ետու յիշատակ եւ ի վայել|ումն հարազատ հոգեւոր որդ|եկոյն իմոյ եւ սիրելւոյն Յովհանն|էս քարոզ բանին կենաց»։ Հմմտ. I եւ V։

III. Թ. 124ա — 125բ՝ «Սուրբ եւ ընտրեալ վարդապետաց ասացեալ։ Յատկութիւն է մարմնով հիւանդին, որ յոր|ժամ զցաւն խստանայ ոչ կարէ երթալ, ոչ կարէ կանգնիլ, ոչ նստիլ, ոչ խօսիլ, ոչ լսել, ոչ ճանաչել զոք . . .» եւն.։ Վջ.՝ «. . . Եւ վերջապէս ընդհանրագունեղ պատճառ ամենայն չարեաց»։

IV. Թ. 125ա—126ա՝ Բարսեղ Կեսարացու ճառերից մի հատուած։ Վնգ.՝ «Մեծին Բարսղի ասացեալ ի վեցօրէիցն գրոց»։ Սկ.՝ «Արդ այգի մեք եմք, մարդիկք, գոր|ծել եւ պահել եւ ամրացուցնել . . .» եւն.։ Վջ.՝ «. . . . խափանեաց համօրէն յիւրմէն զամենայն անառակութիւնս եւ զխորհուրդս երկրաւորս»։

V. Թ. 126ա՝ Յիշատակագրութիւն [առաջին յիշատակագրութեան [I] գրչի ձեռքով]։ «Յիշատակ է երգ երգոց եւ Յոհան|նութիւն [= Յովհաննու յայտնութեան] մեկնութիւնքս Յովհաննէս վարդապետին, որ Տէր Տէրն ինձ էր տուել. եւ ես վայելումն եւ յիշատակ տուի սուրբ յանապատին Շատիկու. ով յանապատէն նենգի եւ կամ գողանայ Աստուծոյ պարտական եւ սեվերես մնայ յաւիտեանս յաւ|իտենից. ամէն. իսկ ընթերցողքն սրտի մտօք եւ յիշօղն զմեղապարտ

գիրիս՝ օրհնեալք եղիցին յԱստուծոյ եւ ամենայն սրբոց»։ Հմմտ. I եւ II 5։

VI. Թ. 126բ—127բ Այլեւայլ աղօթքներ։ «Թագաւորելն մարմնով եւ օծելն աստուածու|թեամբ . . .» եւն., «Արիւն հզօրին Աստուծոյ, անմահ . . .» եւն., «Անմահ բնութիւնն աստուածային, որ մեռաւ . . .» եւն., «Յօղն արեան կենարարին մերոյ . . .» եւն., «Յոյս եւ յարութիւնն ազգի մարդկան . . . .» եւն., «Սքանչելի յարութիւն . . .» եւն., «Ամենազօր մխիթարիչ սուրբ Հոգին . . .» եւն., «Այլ եւ տայ է ձեզ Տէր . . . .» եւն.։ Վջ.՝ «. . . . ամենասուրբ Հոգին յաւիտեանս յաւիտենից. ամէն»։

VII. Թ. 128ա—310ա՝ Անդրէաս Կեսարացու Յովհաննու յայտնութեան մեկնութիւնը եւ Թետալիոսի ներածութիւնը։

Հմմտ. I. P. Migne, Patrologiae cursus completus, Ser. I, tom. CVI, pag. 215—458. Wetzer und Welte's Kirchenlexikon², I 830—832. Գարեգին Զարպհանալեան, Մատենագարան Հայկական Թարգմանութեանց նախնեաց, Վեն. 1889, էջ 297—303. Յակ. Տաշեան, Ցուցակ Հայերէն ձեռագրաց մատենագարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա 1895, էջ 278—283։

1. Թ. 128ա—131ա՝ Թետալիոսի ներածութիւնը։ «Աւգնեա Հոգիդ սուրբ Աստուած։ Առաջաբանութիւն սուրբ գրոյս։ Ի տիեզերական ժողովոյն կամս, որ եղեւ յաստուածապահ քաղաքն Կոստանդինուպօլիս՝ Յայտնու|թիւնս Յովհաննու ընկալեալ եղեւ։ Այլ եւ սորին քննութիւնն, որ եղեւ յե|պիսկոպոսացն Կեսարու։ Զեռնարկ արար ի սկիզբն գրոցս աստուածասէր արք|եպիսկոպոսն Կոստանդինուպօլսի Թէ|տալիոս կամօք եւ հաւանութեամբ հանուր ժողովոյն՝ զայս բանք։

Գիրքս այս յայտնու|թեանս Յովհաննու պատուեցաւ ի մէնջ ը̄ [= ընդ] այլ սուրբ գրոց առաքելականացն, զոր ունի սուրբ եկեղեցի՝ քննութեամբ եւ կամօք եղբարց իմոց եւ եպիսկոպոսակցաց սրբոց։ Եւ է առանց պատճառի ընդունելի. [Թ. 128բ] քանզի ունի զիմաստութիւն Աստուծոյ, որ եւ յօ|գուտ մեծ է հայեցողացն ի սոյն մտաց աչօք որպէս արդարեւ զտուչութիւն սուրբ Հոգոյն՝ զոր պարտ է ոչ անտես առ|նել։ Այլ եւ ճշմարիտ [= ճշմարիտ] է եւ ոչ սուտ, որպէս ի չարաց եւ ի հերձուածողաց ոմանց մարդկանց կարծեցեալ եղեւ։ Նաեւ ստոյգ Յովհաննու սուրբ աւետարանչին է սքանչելի եւ հիանալի յայտնութիւնս որ|դւոյն որոտման։ Զի թէ հաւատամք բանիցն Աթանասի Աղէքսանդրու մեծի հայրապետի՝ որ թարգմանեաց զհին եւ զնոր կտակարանսն, ապա նմա եւ զսոյն ընդ|ունելի եղեւ, եւ ի բազում տեղիս զպատ|չաճ վկայու-

թիւնսն առնու ի բանս իւր։ Նաեւ մեծն Բասիլիոս ի բանն որ վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ կարօտ եղեւ ի սմանէ առնուլ վկայութիւն։ Եւ զնորին եղ|բայրն Գրիգոր Նիւսացին ի բանն յայն, զոր խօսեցաւ յայսմ քաղաքի ի ժողով եպիս[129ա]կոպոսացն։ Այլ աստուածայինն Գրիգոր Աստուածաբանն ի բանսն՝ որ յաղագս Որդւոյ եւ յիւրն հրաժարական։ Նաեւ երա|նելի եպիսկոպոսն Պատարու Մէթոդիոս ի բանն որ յաղագս յարութեան։ Եւ Կիւրեղ Աղէքսանդրու մեծ հայրապետն ի գիրս գանձուցն ի բազում տեղիս պիտանի համարեցաւ զոր ի սմանէ դնել վկայութիւն։ Եւ Հիւպոդիտոս հայրապետն Հռով|մայեցւոց ի մեկնութիւնն զոր արար մարգարէութեանն Դանիէլի։ Բայց ոչ բազմացուցա|նեմք զբանսն, թէպէտ եւ ունիմք այլ վկայս հաւասար սոցա ի սրբոց հարցն, որք հաստատեցին զոլ զայս յայտնութիւն Յովհաննու աւետարանչի։ Զի՞նչ պարտ է ասել եւ զերա|նելին Իրինիոս, որ ինքն վկայէ եւ զայլս որ նախ քան զինքն ի մէջ ածէ։ Այլ եւ ե|րեգթչուառեանն Որոգինէս ոչ թէ միայն ընկալաւ զսա, այլ եւ յաջախ մեկնութիւնս եդ ի վերայ սորին։ Արդ [Թ. 129բ] այս աստուածային յայտնութիւնս կարծեօք գնամք զմեծամեծ սուրբ հայրապետ եւ ըզ|ճըշմարտութեան վարդապետսն, որք մաքրեցին զտ[ի]եղերս ի չարաչար հերձուածոց, եւ զսմին վկայեցին ճշմարիտ զոլ, արհա|մարհեմք։ Եւ զի թէ սա անընդունե|լի թուի մեզ, անընդունե|լի լիցին եւ ըն|դունօղքն սորին. զոր մի լիցի մեզ զմտաւ ածել զչար մտածմունս զայս։ Այլ հաւա|տամք զսա ճշմարտապէս զոլ Յովհաննու որդւոյն Զեբեդեայ զսրբոց հարցն առաջ|նոցն հետեւելով։ Եւ քանզի այս տուաւ նմա մարգարէութեան չնորհք յԱստուծոյ վասն երկ|նային խորհրդոցն, եւ որ ի վերայ յերկրի եղեւ, եւ որ լինելոցն է, յորում տեղե|կանան ամենայն մարդիկք, աստուածային երկ|իւղիւն յայսմ բանից։ Ո՞վ եւ թէ ո՞րք անհասութեան սովաւ հասանե|լի լինի աստուածասէր ընթերցողաց, որ ոչ ամենայն իմաստութիւն Ծի [= աշխարհի] այսորիկ [130ա] կարօղ է ցուցանել։ Վասն զի ի սմայ է պարունակեալ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի մարմնառիկ տնօրէնութեանն խորհուրդ եւ յերկինս ը̄ [= ընդ] մարդկան հանգստեանն եւ կրկին գալստեանն Որդւոյն Աստուծոյ՝ հայ|րենէ փառօք ի դատաստան։ Կարեւոր է եւ զայս ասել. քանզի զի՞նչ է, որ բռ|նադատէ զմեզ յայսմ հաւանութիւն, թէ ոչ զիտէաք զսա ճշմարտութեամբ աստուածային խորհրդոցն յայտնութիւն։ Նաեւ ինքն Աստուածաբանն ձայնէ ի յըս|կզբան բանիս, թէ ոչ ի մարդկանէ է, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստսի եղեւ առ նմա յայտնու|թիւնս. որում եւ մեծն Պօղոս իսկ

վկայէ, թէ Յիսուսիւ Քրիստոսիւ հաստատեցաւ ամենայն՝ եթէ երկ-
նաւորքն եւ երկրաւորքս, որ է գլուխ եկեղեցոյ եւ անդրանիկ
մեռելոց, զի եղիցի ինքն յամենայնի յառաջացեալ: Արդ ինքն Տէրն
մեր Յիսուս Քրիստոս՝ հաս|տիչն ամենայնի՝ հաւատամք թէ յայտ-
նեաց [130բ] իւրոյ ծառային եւ սիրեցեալ աշա|կերտին Յովհաննու
զերկնային խորհուր|դս, եւ զոր հանդերձեալ է լինել ի վերայ
յերկրի: Վասն այսորիկ եւ ես նուաստ արքեպիսկոպոս ար-
քայանիստ քաղաքին Կոս|տանդինուպօլսի՝ Թէտալիոս,
եւ որք ԸՆ [=ընդ] ինեւ սուրբ եւ աստուածային ժողովս՝ ընկա-
լաք զսա պատուով ի կաթու|ղիկէ եկեղեցի սուրբ իբրեւ զար-
դարեւ Յիսուսի Քրիստոսի Տեառն մեր յայտնութիւն: Նաեւ տե-
սութիւն մեկնութեանս, զոր արարեալ է սմա Անդրէի
արքեպիսկոպոսին Կեսարու, հաճոյ թուեցաւ տ[ի]եղերական
ժողովոյս: Քանզի ոչ թէ անձամբ անձին, այլ ի վերայ հարցն
սրբոց հիման է եդեալ չինուածս բանից իւրոց, եւ զնոցա աստուա-
ծային հոգւոյն տու|չութիւն առեալ է իւր առաջնորդ եւ վկայ ի
քննութիւնս իւր: Ուս|տի եւ ընդունելի է այս տեսութիւն,
[131ա] զոր եդ ի վերայ յայտնութեանս Յովհաննու՝ եպիսկոպոսն
Կեսարու ի կաթուղիկէ եկեղեցի, մերոյ տիեզերական ժողո|վոյս
հաճութեամբ: Եւ է ամենայն բանք գրոյս այսորիկ ի քսան եւ
չորս ճառ բաժանեալ, եւ յեօթանասուն եւ եր|կու
գլուխս, հայելով յայս խոր|հուրդ թուոցս, զի երեգքսան եւ չորսն
լինի եօթանասուն եւ երկու, եւ է քսան եւ չորից թիւն ի խոր-
հուրդ քսան եւ չորս իրիցանցն, զոր ետես սուրբն Յոհան: Եւ եօ-
թանասուն եւ երկու գլուխն նշանակէ գոլ զնոսա զամենասուրբս,
որք հոգւով եւ շնչով եւ մարմնով հաճոյք գտան Աստուծոյ նախ
քան զօրէնս, եւ որք յօրինօք եւ որք ԸՆ [=ընդ] չնորհօք, որք
պաշտեցին երեգ դասք, երեգ մասամբք զանբաժանելի զամենա|-
սուրբ Երրորդու|թիւնն»:

2. Թ. 131բ—134բ՝ Ցանկ: Վնգ.՝ «Գլուխ Յայտնութեանս, զոր ե|տես
ի Պատմոս կղզին սուրբ աւե|տարանիչն Յոհաննէս»:

3. Թ. 135ա—140բ՝ Անդրէասի եւ Արեթասի յառաջաբանը: Վնգ.՝
«Ի յայտնութիւնն Յոհաննու սրբոյ հօր մեր Անդրէի երանելւոյ
եպիսկոպոսի Կեսարոյ Կապադովկեցոց համա|ռօտ տեսութիւն: Ընդ
նմին եւ Արե|թաս եպիսկոպոսի նմին քաղաքի»: Սկ.՝ Աստուա-
ծային խորհրդական բանիցս անհասութիւն ոք հայելով, մի բան-
բասեսցէ զմերս համարձակութիւն, որք բուռն հարաք զսոյն իմա-
նալ: Քանզի հաւատամք ...» եւն.: Վջ.՝ «... Այսպէս եւ ի ձեռն

նոցին սրբոց զօրու|թեանցն զիւր փառսն եւ զպաշտօնն ի նոցանէ
եւ զմիւս անգամ գալստեանն ահաւոր խորհուրդ յայտնեաց սուրբ
եկեղեցւոյ»:

4. Թ. 141ա—306բ՝ Մեկնութիւն: Վնգ.՝ «Յայտնութիւն սրբոյն Յո-
հաննու ա|ւետարանչի եւ աստուածաբանի»: Սկ.՝ «Առաջին ճառ:
[Յ]այտնութիւն Յիսուսի Քրիստոսի, ի ձեռն որոյ ետ Աստուած ցու-
ցանել ծառայից իւրեանց որ լինելոց է վաղ|վաղակի: Յայտնու-
թիւն ասի զծածուկ խորհր|դոցն երեւումն ի ձեռն որոյ պայծա|-
ռանայ իշխանականն, եթէ աստուածային տեսլեամբք ...» եւն.:
Թ. 149ա՝ «Եւ ոտք նորա նման պղնձի ծխելոյ ի մէջ հնոցի հրաշէկ:
Զոտսն եւ աստուածայինն Գրիգորիոս զմարմնով անօրէնութեանն
գոլ ասէ նշանակ, որով զմեր փրկութիւն ...» եւն.: — Թ. 151ա՝
«Զայս գլուխս եւ Աստուածաբանն Գրիգորիոս զմտաւ ածեալ
եւ զաստեղսն ապացոյց լուսաւորութեանն եւ մաքրու|թեանն
անուանեաց ....» եւն.: — Թ. 163ա՝ «Աստուածաբանն Գրի-
գորիոս ասէ, ստոյգ եւ իրաւացի է ցուրտն ի կենաց հաւատոյն
ան|ճաշակն լինել, եւ յոյս կայ նորա առաջի ի ձեռն մկրտու-
թեանն ....» եւն.: — Թ. 208բ՝ «Զսա ոմանք զԱստուածածինն
կարծեցին վասն նո|րին աստուածածնողութեանն. բայց մեծն Մե-
թոդիոս ի սուրբ եկեղեցի տարաւ զխորհրդոյս զօրութիւնն, ան-
յարմար ասէ գոլ տէրունական ծնընդ|եանն այս, որ նախ բազում
ժամանակօք կատարե|ալ էր, բարւոք է զնոյն բանս երանելոյն
Մե|թոդիոսի յիշել զոր ասացեալ է ի բանն որ վասն արբեցու-
թեան ի դիմաց Պրոկղեայ կուսին այսպէս: Կինն որ զգեցեալ
էր զ ♂ [=զարեգակն], է եկեղեցի, զի որպէս մեզ զգալի լոյսս՝
նորա իմանալին, որպէս մեզ այս նշոյլք քաղցր, նմա այն ճառա-
գայթ|քն ...» եւն.: Վջ.՝ «Այլ որ զամենեցուն կամի զփրկու-
թիւն եւ զգիտութիւն ճշմարտութեան զհասանելն ծագեսցէ ի սիրտս
ամենեցուն զլու|սաւորութիւն գիտութեան փառացն իւրոց չնորհօք
ողորմութեանն իւրոյ, ընդ որս եւ մեք փառս վեր առաքեմք Հօրն
ամե|նակալի, Որդոյն միածնի եւ սուրբ Հո|գւոյն ճշմարտի յաւիտ-
եանս յաւիտենից: Ամէն»: Վերջին՝ «Զբազմավէր Մովսէս գծօղս
յիշեցէք ի Քրիստոս, ով ընթերցօղք»:

5. Թ. 307ա—309ա՝ Ներսէս Լամբրօնացու յիշատակարանը: «Յի-
շատակ սուրբ տառիս գտօղի տեառն Ներսէսի գերահռչակ վար-
դապետի, զոր գտեալ ի մեծն Ան|տիոք գրեաց զսա ի լուսաւորու|-
թիւն հոգւոց մարդկան:

Ես Ներսէս նուաստ ի Քրիստոս եւ տարտամս յուսումնա-
սիրաց, զվերջին եւ նուազեալ ժամանակի ծը|նունդս, յնթեռնուլն

զյայտնութիւնն Յօհաննու սուրբ աւետարանչին, որ յայտնե|ցաւ նմա ի վերուստ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի Պատմոս կղզին, յոյժ տագնապէի յանձն իմ առ ի ոչ գիտել զլուծումն բանիցն սքանչելեաց. Եւ կարի որո|նմամբ այսր եւ անդր խուզելով զմեկնու|թիւն նորին ի մերս բարբառ եւ ոչ գտի. յետ որոյ եհաս ինձ ընթանալ ի մեծն Անտիոք եւ չրջելով որ անդ զվանո|րայս Հռոմոց եւ զՖռանկաց, այս տենչումն բորբոքէր ի միտս իմ, ուս[307բ]տի եւ քննեալ գտի ի գրեանս հրչակաւոր ուխտի սրբոյն Պօղոսի ի քաղաքէ անդ ըզ|մեկնութիւն յայտնութեանս ի լունպարտ բարբառ եւ ի նոյն գիր որով Ֆռանկք ԲԸ. մեկնչաց արարեալ. եւ փափաքեցի թարգ|մանել եւ ոչ գտի զոք՝ որ յայնմ բար|բառոյ ի հայ բարբառ կարէր յեղա|չրջել: Ապա ելեալ արտաքոյ քաղաքին ի սուրբ լեառն որ ի հիւսիսոյ կողմն անդր ի մի վանորէից Հռոմոց, որում անունն էր Պէթիաս, առ ոմն արգե|լական միայնակեաց, որոյ անունն Բասիլ, կնքեալ (քնն) գտի զցանկալին ի հելլենացի բարբառ եւ գիր, ուղղաբան եւ վայելուջ, որ լեալ էր Աթանասի պատ|րիարգի նորին քաղաքի: Եւ խնդրեալ աղա|չանօք ի բարէմիտ յառնեն, առեալ փութացայ գրովքն ի հայրապետական աթոռն առ տէրն իմ եւ ի կաթուղի|կոսն սուրբ Գրիգորիս, զոր ծանուցեալ [308ա] ուրախ եղեւ յոյժ: Եւ հրամայեաց թարգմանել ի ձեռն մետրապօլտին Կոստանդիեայ Յերապօլսի, որ անդ ի ներքոյ հովանւոյ սրբոյ հայրապետին հանգչէր: Եւ սկսեալ օգնականութեամբն Աստուծոյ եւ սրբոյ Տեառնն նա ի թարգմա|նել եւ ես ի գրել, եւ վերընծայեցաք սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց ուսում|նասէր մանկանց զայս սքանչելի եւ աստուածային յայտնութեանս մեկնութիւն:

Արդ աղաչեմ զընթերցօղսդ եւ ի զիմաստութեան սիրօղսդ, յիմանալ ըզ|խորս Աստուծոյ իմաստիցն քննութեամբս յիչել ի Տէր զսուրբ հայրապետն Հայոց զտէրն իմ Գրիգոր զբարեմիտն եւ զբարեսէրն եւ զառիթն թարգմանութեանս եւ հրամայ|օղ. մաղթեցէք զՏեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ յաստիս խաղաղութեամբ պահել, եւ ի հան|դերձեալն ԸԸ [= ընդ] սրբոց իւրոց յերկնից արքայութեանն դասակիցս եւ պսակակիցս առնել: [308բ] Այլ եւ Կոստանդին մետրապօլիտն որ թարգմանեաց, եւ զԲասիլ կրօնաւորն որ զօրինակն ետ. Տէրն Քրիստոս (իւրոյ) ո|ղորմութեանն իւրոյ արժանացուսցէ զնոսա անճառելի ողորմութեանն իւրոյ աղօթիւք ձերովք:

Արդ թարգմանեցաւ աստուածային յայտնութեանս մեկնութիւն ի թու|ականութեանս Հայոց վեց հարիւր եւ քսան

եւ ութ ամին ի սուրբ եւ ի հայ|րապետական աթոռն որ կոչի Հռոմկլայ, չրջապատեալ յեղեմական աղբերէն Եփրատայ, որ մատակարարէ բնակչացն զամենայն մարմնական պիտոյսն խնամօքն Աստուծոյ, ընդ հովանեաւ աստուածընկալ սուրբ նշանին Վանկոյ, եւ սքանչելի որբոցն, որք հանգուցեալք են անդր ի փառս Աստուծոյ: Իսկ սրբանեցաւ ի նշանա|գրութենէն քերթողական արհեստիւ [309ա] ի յապահով անապատս սուրբ Գեւորգեայ՝ որ ի մէջ լերինս Տօրոսի, որ է ի Գահ Կիլիկւոյ, եւ ի սկիզբն Պանփիլիու, ձեռամբ նուաստ եպիսկոպոսի նորին քաղաքի Տարսոնի, տառապելւոյ Ներսէսի, շնորհոք եւ ողորմութեամբ Տեառն Քրիստոսի, որ է օրհեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

6. Թ. 309ա—310ա՝ Գրչի յիշատակարանը: Հմմտ. II 4: «Եւ դարձեալ ես անպիտանս ի կարգ|ս կոչեցելոցն եւ անարժանս ի պարս հրաւիրելոց՝ Մովսէս թշուառացեալս զվերջին գծօղ եւ զստացօղ սուրբ մեկնչիս երեսս ի գետնի եդեալ արտասուաթոր աչօք եւ կողկողագին պաղատանօք հայցեմ սուրբ սիրով եւ ջերմեռանդ հաւատով ընթեր|ցողացդ, զի ի միոյ Հայրմերի եւ տէրողոր|մեայի արժանացուցանել անարժանս եւ թողութիւն խնդրել ինձ մեղաւորիս. Նաեւ ծնօղացն իմոց Ալէքսանին եւ [309բ] Շնորհաւորին եւ եղբարցն իմոց եւ որդւոցն դեռաբոյս Ալէքսանին եւ այլոցն, նաեւ ամենայն արեան առու մերձաւորացն իմոց: Զի եւ դուք յի|չեալ լիջիք ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. ամէն:

Արդ գրեցաւ սուրբ տառս ի թուա|կանութեանս Հայոց հազար հար|իւր քառասուն եւ ինն ամին ի փետրվարի ամսոյ ԺԴ յաւուր տօնի քառասնօրեայ գալստեանն Փրկչին Յիսուսի ի տաճարն սուրբ, ի կաթողիկոսութեան տեառն Նահապետի եւ մերոյս առաջնորդութեան Մատթէոս վարդապետի, յերկիրս Երինճակու. ի գեօղն Նորաշինիկ, ԸԸ [= ընդ] հովանեաւ սուրբ Աստուածածնի, սուրբ Կարապետի եւ սուրբ նախավկայի տաճարիս, զոր շնորհօքն Քրիստոսի ի թվին .ռճլ. եւ վեց ամին հիմնար|կին եւ բազում աշխատանօք ի կատար հասուցին ողորմութեամբն Աստուծոյ, զոր Տէրն Քրիստոս վարձահատոյց լիցի երախտաւորացն: [310ա] Ի դառն եւ յանբարի ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց եւ թողլոյ մեզ զօրէնս Աստուծոյ, մատնեալ կամք ի ձեռն ժան|դաբարոյ ազգին Պարսից, զոր իբրեւ անսաստալիք ծովու յարուցեալք են ի վերայ սրբոյ եկեղեցւոյ եւ յորդւոց նորին, եւ կամին կլանել: Զոր եւ ի սոյն ամի հրա|ման դառնութեան ել ի դրանէ թագաւորին, զի զվանք, զանապատք եւ զեկեղեցիք հանդերձ բնակչօք իւրեանց ի ներքոյ ծանր հարկ

դնել, զի զեռ նոր է բորբոքեալ հուրս այս։ Զոր Տէրն Յիսուս հոգւով զօրութեան իւրոյ փուքիւ չիջուսցէ եւ յամօթ արասցէ ինքնամեծարն Բէ|հէմովթ հանդերձ գործակցովք իւրովք։ Եւ զսուրբ զեկեղեցի իւր պահեսցէ հաստատուն եւ անշարժ ի վերայ վիմի սրբոյ հաւատոյ մինչեւ ի գալուստն իւր սուրբ։ Եւ ինքն օրհնեալ եղիցի յաւիտեանս յաւիտենից։ Ամէն»։

VIII. *Թ.* 311ա—316բ՝ «*Ի մեկնութենէ բանի սուրբ աւետարանչին, որ ա|սէ թէ՝ Զի եթէ յայտնեսցի նա նը|ման նմա լինեսցեմք . . . .*» *եւն.։ Վ.*՝ «*. . . . անհնար է յազեալ որովայնի սուրբ խորհրդոց ծնանիլ*»։

* * *

ՀԱՄԱՐ 8.

ԹԵՐԹ 95։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ 20×15,5 սմ. [գրութիւն միասիւն 15×10 սմ.]։ — ՏՈՂ. 19 [նախ ճեմամբ հորիզոնական գծուած, ապա յղկուած, կապարով ուղղաձայեաց գծուած]։ — ՆԻՒԹ բուղթ։ — ԴԻՐ բոլորագիր, յիշատակարանները բացի ճ. շղագիր։ — ՎԵՐՆԱԳԻՐ եւ ՍԿԶԲՆԱԳԻՐ կարմիր։ — ԶԱՐԴԱԳԻՐ կարմիր եւ շագանակագոյն 1ա, 18ա, 28ա, 35ա, 48ա, 61ա, 70բ եւ 94բ։ — ԽՈՐԱՆԱԶԱՐԴ 1ա։ — ԲԱՒԱՆԴԱՑՈՒՄ համարեա միշտ։ — ԿԱԶՄ փայտեայ, կաճեպատ։ — ԹՈՒԱԿԱՆ անյայտ, բայց 1631-ից առաջ։ — ԴՐԻՋ եւ ՏԵՂ. անյայտ։ — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ 10բ, 18ա, 28ա, 35ա, 47բ, 48ա, 61ա, 70ա, 94բ, 95բ, տես 2, 4, 6, 8, 10, 11, 13, 15, 17, 18, 19, 20, 21 եւ 22։ — ՎԻՃԱԿ կազմից ելած, մի ֆանի թերթ դուրս հանուած, այսինքն մէկը թ. 39 եւ 40-ի մէջ, ինչ հաս թ. 62 եւ 63-ի մէջ եւ վերջից երկու հաս։

ՄԱՏԵԱՆՆ Է

ՔԱՐՈԶԱԳԻՐՔ

Հմմտ. Յակ. Տաշեան, Յուցակ Հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա 1895, էջ 375, Համ. 102, 2. 3. 4. 5. 7. 8. 9։

1. *Թ.* 1ա—10բ՝ «*Ճարտուղ ի բան աւետարանին որ ա|սէ՝ Եղերուք խորտակտ իբրեւ զաւ|ձ եւ միամիտ իբրեւ զաղաւնիք*»։ *Սկ.*՝ «*Նախ զիտելի է զի որդ* [= որպէս] *մարդս հոգի է եւ մարմին. նոյնպէս սուրբ գրոց բանն հոգեւոր է եւ մարմնաւոր. զի եւ աստուածայինն գրոց բանն խորին է եւ ծածուկ . . .*» *եւն.։ Վ.*՝ «*. . . ապա գտցես թողութիւն մեղաց քոց, որոց աղաւթն ողորմի քեզ Քրիստոս Աստուած ըստացող ի գրոցս*»։

2. *Թ.* 10բ՝ «*Ես անարժան մեղաւոր Կարապետս գրեցի վէ|րնամայեան* [= وفا نعمت] *որ եկաւ Ըսպհանայ քաղաքն։ Ես անարժանս գնացի ասլիէան* [= اصفهان] *առ Թ. աճձգ-ումն էր որ գնացի կարդալ . . .*»։

Հմմտ. 20։

3. Թ. 11ա—18ա՝ Տաշեանի ցուցակում 102, 2 յիշուած քարոզի մի հատուած։ Սկ.՝ «. . . [ք]աղցր է. յերբ կըծէ զմարդն եւ խոցէ նայ չի ցօիլ [= ցաւիլ] եւ կըսկըծալ, այլ անուշ մրմնջայ եւ քորի, եւ մարդոյ քուն տանի. ի քուն մեռանի եւ այլ ոչ յարթնու. անբժշկելի է թիւնքն իժին . . .» եւն.։ Վջ.՝ «. . . եւ մատն|ին ի կուրուստն յօիտենից [= յաւիտենից], յորոց եւ փրկեսցէ Քրիստոս Աստուած զամենայն հօտացեալ [= հաւատացեալ] անուան իւրոյ որ ողորմիս Քրիստոս Աստուած ստացող ի սուրբ գրոցս»։

4. Թ. 18ա՝ «Մեղայպարտ Սիմ|ոնին եւ ուր հայրն հանկուցեալ Մկէրտումին եւ մայրն իմ Սալմինաղին եւ կողակիցն Գարան|ին ընթրցողիս եւ լսողաց եւ որ զողորմեա ասէք. ամէն»։

Հմմտ. 6, 8, 10 և 15։

5. Թ. 18բ—28ա՝ «Քարոզ ի բանն Սողոմոնին՝ Որ զանձն ի գործս իւր ոչ բժշկէ, եղբայր է նայ այնոցիկ որ յանձն առկիցէ»։ Սկ.՝ «Անձն զբանական հոգին ասէ, որպէս ասէ մարգարէն. Աւրհնեայ անձն իմ զՏէր եւ մի՛ մոռանար զտուրս . . .» եւն.։ Վջ.՝ «. . . եւ լուցկի լինի յանչէջ հրոյն, յորոց փրկեսցէ Քրիստոս Աստուած զամենայն հաւատացեալս [Թ. 28ա] անուան իւրոյ եւս առաւել զստացող սուրբ գրոցս»։

6. Թ. 28ա՝ «Մեղայպարտ Սիմոնին եւ հայրն Մկերտումին եւ ծնողացն Սալմենաղին եւ կողակիցն Գարանին ընթերցողիս եւ լսողաց եւ որ զողորմեա ասէք. ամէն»։

Հմմտ. 4, 8, 10 և 15։

7. Թ. 28ա—35ա՝ «Քարոզ ի բան Սողոմոնի որ ասէ՝ Մահ եւ կեանք ի ձեռն լեզուի, եւ որք ըմբռնեն զնայ, կեր|իցեն զպտուղ նորայ»։ Սկ.՝ «Առաջին խրատ վասն մամնօոր [= մարմնաւոր] կենացս է. ճշմարիտ մահու եւ կենաց պատ|ճառ լեզուն է . . .» եւն.։ Վջ.՝ «. . . այսպէս մերձենայ ի մարմինն քրիստոնէին, յերբ տեսանէ զահօոր [= զահաւոր] նշանն ի վերայ գերեզմանին»։

8. Թ. 35ա՝ «Մեղայպարտ Սիմոնին եւ հայրն իմ Մկերտումին եւ ծնողացն իմ Սալմինաղին եւ կողակիցն իմ Գարան|ին ընթերցողիս եւ լսողաց եւ որ զողորմեա ասէք. ամէն»։

Հմմ. 4, 6, 10 և 15։

9. Թ. 35ա—47բ՝ «Քարոզ ի բան Յովհանու որ ասէ՝ Ամենայն որ ատէ զեղբայր իւր մարդասպան է եւ գիտեմք, զի ամենայն մարդասպան ոչ ունի կեանս»։ Սկ.՝ «Զայն հրամայէ թէ ամենայն մար|դ որ ատէ զեղբայր իւր մարդասպան է, եւ որպէս մարդասպան մարդն չո[ւ]նի

արքայութեան բաժին, այսպէս մարդ որ սրտովն ատէ զընկերն . . .» եւն.։ Վջ.՝ «. . . եւ ոխակալութեան, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած յայնպիսի ոխակալութենէ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ, եւս առաւել զստացող գրոցս»։

10. Թ. 47բ՝ «Մեղայպարտ Սիմունին եւ հայրն իմ Մկէրտումին եւ ծնողացն իմ Սալմինաղին եւ կողակիցն Գարանին ընթրցողիս եւ լսողաց եւ որ զող[որ]մեա ասէք. ամէն»։

Հմմտ. 4, 6, 8 և 15։

11. Թ. 48ա՝ «Դայցեայլ [= դարձեալ] յիշեցէ էրեց Մկրտիչն յիր որդին Մայրքայրն Ավապն ձեդիգայրն, յորն դրստրն Ղայփրին Մալայն յիշեցէք»։

12. Թ. 48ա—61ա՝ «Քարոզ ի բանն Յոբայ որ ասէ՝ Աղաւթք իմ սուրբ է|ին եւ ճշմարիտ առաջի Աստուծոյ»։ Սկ.՝ «Եւ նախ զայս պարտ է գիտել թէ քան զամենայն առաքինութիւն պատուակ|ան է աղաւթքն. նախ անուան իւրոյ յայտնէ զիւր փառքն . . . .» եւն.։ Վջ.՝ «. . . եւ կատարի քո հայցուածն ի բարին, որ եւ կատարեսցէ Տէր Աստուած զամենայն խնդրուածս ըստացողի գրոցս»։

13. Թ. 61ա՝ Դայրցեայլ յիշեցէք էրեցն Կիրակուս, կողայկիցն զՈւլայլն եւ որդին Գայռէչն, Նրսէս(էս), Ոսկան, Ակոբն, Շայն [= Շահէն], Դորս, Գուփրէն յիշեցէք»։

14. Թ. 61ա—70ա՝ «Քարոզ ի բան Սողոմոնի որ ասէ՝ Ողորմի աղքատին փախ տայ Աստուծոյ»։ Սկ.՝ «Այսպէս հրամայեն վարդապետքն եկեղեցոյ թէ քրիստոնէից բար|ի գործքն գ̄ ազգէ գ̄. բաժանի . . .» եւն.։ Վջ.՝ «. . . եւ գաց|ուք ողորմութիւն ի դէպ ժամանակի, որ եւ արժանի արասցէ Տէր Աստուած ողորմութեան եւ մեղաց թողութեան ըստացող գրոցս»։

15. Թ. 70ա՝ «Մեղայպարտ Սիմոնին եւ հայրն Մկէրտումին եւ ծնողացն Սալմինաղին եւ կողակիցն Գարանին ընթրցուղիս եւ լսողաց եւ որ զողորմեա ասէք. ամէն»։

Հմմտ. 4, 6, 8 և 10։

16. Թ. 70բ—94բ՝ Քարոզ ի բան Յոբայ որ ասէր, Այր մի էր Աւսիտ աշխարհէն»։ Սկ.՝ «Այր մի էր Աւսիտ աշխարհին արդար, ողոր[մ]ած, աստուածապաշտ, հե|ռացեալ յամենայն իրաց չարեաց . . . .» եւն.։ Վջ.՝ «. . . նոյնպէս ի մէ|ջ ամենայն արդարոցն Յոբ քան զամենայն պատուական է, որ համբերութեան է նպ|ատակ. եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւ|իտեանս. ամէն»։

17. Թ. 94բ—95ա՝ «Փառք ամենայսուրբ Երրո|րդութեան Հաւր եւ Որդոյ

եւ Հոգոյն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Արդ գրեցաւ քարոզգիրքս ի դա|ռն եւ վիշտ ժամանակիս ի խնդր|ոյ բարեմիտ եւ հեզահոգի Էլիէն եւ զծնաւղսն իւր զՀոռոմ-Կիրա|կոսն եւ զմայրն իւր զԲաղչայգուլն, որ առ Քրիստոս են փոխեցեալ. ամէն։ Դարձեալ կրկին անգամ յի|շեցէք զԷլիէն եւ զկողակիցն իւր զՈւլալն եւ զորդիքն իւրեանց զԳաբրիէլն, զԱստուածատուրն, զՏիրատուրն, եւ Գա|բրիէլի կողակիցն զՆիկարն եւ զորդ|իքն իւրեանց զՆորվարդն, զԿիրակոսն, զՄկրտիչն յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք։ Դարձեալ յիշեցէք զԱստուածա|տուրն եւ զկողակիցն իւր Թուրվա|նդն, զՏիրատուրն եւ զիւր կողակ|իցն զԽանտուտն եւ զորդին իւրեանց զՅովանէսն։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԵլիէն եւ զկողակիցն զՈւլալն որ ստացաւ զայս քարոզգիրքս ի հալալ արդե|անց իւրոց եւ . . . յիշեցէք եւ . . . ողորմի ասացէք. ամէն»։

18. Թ. 95ա՝ «Ես զանարժան տէր Մարքարս ԺԸ . . . որ չահ Մայմուտն եքաւ Ըսպհա[նայ քա]ղաքն խլեց չահ Սուլթան հ . . . թվականիս ռճհա-ին մարտի ամսի ԺԵ-ն»։

19. Թ. 95բ՝ «Դարձեալ յիշեցէք զԵլիէն եւ կողա|կիցն զՈւլալն եւ զդուստր իւրեանց զԵղ|իսաբեթն յիշեցէք եւ Աստուած ողորմի ասա|ցէք. ամէն։ Ստացայ գիրքս ի հայրապետութեան տէր Մովսէս կա|թուղիկոսին ի թագաւորութեան չա|հ Սէֆուն ի թվականիս Հայոց ռ եւ ձ թվին. ամէն. Հայր մեր.։ Դարձեալ յիշեցէք զԵլիի եղբայրն Սէնտիկն եւ կողակիցն Ջանխաթ|ուն եւ զորդին Նորվարդն, որ առ Քրիստոս են փոխեալ. յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք»։

20. Թ. 95բ՝ «Դարձեալ յիշեցէք Սարքիսի որդի սուտանուն Կարայպետն եւ մէրն նորայ Հէրիգն. թուին ռճձգ»։

Հմմտ. 2։

21. Թ. 95բ՝ «Դարձեալ յիշեցէք զԵլիի եղբայրն Սենտիկնակ»։

22. Թ. 95՝ «Արդ յիշեց|էք տէր Խաչատուր որդի Գարպարն [= Գասպարն], միւս որդի Մէլիք, միուս որդի Մէքէլ, Մալմէլ, դուրսդր Լոլայն յիշեցէք Աստուած ողորմեայ. ամէն»։

* * *

ՀԱՄԱՐ 9.

ԹԵՐԹ 303 (դաստարկ 1աբ, 4բ, 297բ—303)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ 19,7—8×12, 5—8 սմ. (գրութիւն միասիւն 12×7,5 սմ.)։ — ՏՈՂ 19 (նախ ճընշմամբ ուղղահայեաց եւ հորիզոնական զծուած, ապա յղկուած)։ — ՆԻԻԹ թուղթ, դեղնագոյն, ողորկ։ — ԳԻՐ նօտրագիր։ — ԽՈՐԱԳԻՐ (5ա) կարմիր, խորագրի սկզբնագիրը կապոյտ։ — ՎԵՐՆԱԳԻՐ կարմիր, „Առաջին“ի (5ա), „Բացայայտութիւն“ի (121ա) եւ իւրաքանչիւր „Պրակք“ի (5ա, 9ա, 13ա նւն.) սկզբնագիրը կապոյտ։ — ՍԿԶԲՆԱԳԻՐ կարմիր։ Զարդագիր, կարմիր եւ կապոյտ 5ա, 38բ եւ 43ա։ — Պրակների երկու սկզբնատողերը կարմիր՝ 5ա, 43ա, 64բ, 87բ, 167բ, 173ա, 189բ, 208ա, 234բ, 253բ, 283ա։ — ԲԱՌԱՆՋԱՏՈՒՄ համարեա միշտ։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ կապոյտ եւ կարմիր՝ 5ա, 38բ, 43ա, 122ա, 129ա, 162բ, 173ա, 189բ, 208ա, 234բ, 253բ, 283ա։ — ԿԱԶՄ փայտեայ կաշեպատ։ — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ 5ա կնիք չորս տառերով (Յ.Ա.Ծ.Հ.) եւ թուականով 1784։ — ՎԻՃԱԿ ընդհանրապես լաւ։

ՄԱՏԵԱՆՍ Է

ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ԲՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ

լուսանցքի բազմաթիւ մեկնութիւններով

Հմմտ. Ueberweg-Heinze, Grundr. d. Gesch. d. Philos. I 197, 198, 201, 206—208։

1. Թ. 2ա—4ա՝ առաջին եօթը գրքերի ցանկը. վերջում՝ «Ծաներուք ո՛վ ուսումնասէրք, զի ահա՛ 'ի սկզբ|բանս աստ գրեցաւ զցանկ եօթեանց գրոցն գրքոյս։ Իսկ եօթեանց գրոց ցանկն՝ յաւարտումն, զի բոլոր գիրքս այս չորեքտասան մասն է»։

2. Թ. 5ա—297ա՝ «Արիստոտէլի Ստագիրացւոյ գիրք Բը|նազանցականաց, որ կոչի յունարէն Մէթա|ֆիզիկայ։ Գիրք առաջին։ Պրակք առաջին։ Յաղագս փորձի, արհեստի, եւ մակացութեան եւ թէ իմաստութիւն է՛ մակացութիւն, որ պատ|ճառաց ոմանց եւ

ՀԱՄԱՐ 11.

ԹԵՐԹ 393 [դաsարկ 1, 2, 388բ, 389—393]։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ 31,8×21,3 սմ. [գրութիւն միասիւն 24×14,2 սմ., 6աբ, 81բ—87ա երկսիւն, իւրաքանչիւր 24×6,8 սմ.]։ — ՏՈՂ 40 [կարմիր թանաքով ուղղահայեաց եւ ճնշմամբ հորիզոնական գծուած, ապա յղկուած]։ — ՆԻԻԹ թուղթ։ — ԳԻՐ նosրագիր։ — ՎԵՐՆԱԳԻՐ կարմիր։ — ՍԿԶԲՆԱԳԻՐ եւ ՍԿԶԲՆԱՏՈՂ շագանակագոյն։ — ԲԱՌԱՆՋԱՏՈՒՄ միշs։ — ԿԱԶՄ թղթեայ, կաշեպաs։ ՎԻՃԱԿ լաւ։

ՄԱՏԵԱՆՍ Է

ՅՈՎՍԵՊՈՍ ՓԼԱՓԻԱՆՈՍԻ ՀՆՈՒԹԻՒՆ ՀՐԷԻՑ

(Ἰουδαϊκὴ Ἀρχιολογία)

Հմմտ. Josephi Opera. Edidit et apparatu critico instruxit Benedictus Niese, 2 Voll., Berolini 1887 seq., vol I.

Խրգ. [Թ. 3ա]՝ «Գիրք մատենի հնագոյն պատմութեանց։ Շարադրեալ եւ արարեալ ի Յովսեպոսէ Փլափիանոսէ Եբրայ|եցւոյ քահանայէ Երուսաղէմացւոյ յամէն|իմաստուն պատմչէ։ Իսկ թարգմանութեամբ ի լոյս ածեալ յԻտաղացւոց բարբառոյ ի հայ լեզու ի Կոստանդնուպօլսեցւոյ Տայի Սիմոնեան Աթանաս վարդապետէ եւ եպիսկոպոսէ ի փառս մեծին Աստուծոյ եւ ի պարծանս ազգի իւրոյ Ար|չակունւոյ։ Ի խնդրոյ ազնուազարմ եւ բարեբարոյ քրիստոսասէր պարոն . . . . . [անունը պակաս է]։ Սկսեալ եղեւ թարգմանութիւն սոյն մատենիս յամի Փրկչին 1760 յա|պրիլ ամսոյն 22 եւ աւարտեցաւ յամի Փրկ|չին 1761 ի մայիսի 16։ Ի հայրապետութեան Տեառն Տեառն Յակոբայ կաթողիկոսի Շա|մախեցւոյ։ Յաւուրս պատրիարգութեան մեծի Պօլսոյ Տեառն Տեառն Յակոբոյ աստուածաբան վարդապետի եւ արհիապատիւ եպիսկոպոսի»։

1. *Թ. 4ա—5բ՝ Յառաջաբան։ Վնգ.՝ «Բան առ բարեմիտ ընթերցօղդ»։ Սկ.՝ «Բազում են վկայք, բազում են գրիչք, բազում են, որք ապա|ցուցաբար մեզ առաջարկեն եւ ի գիրս իսկ իւրեանց արձանա-*

ցուցան|են զհեղինակի այսմիկ մեծի գործոցս, զՅովսեպոսի Փլափիանոսի զքահանային Եբրայեցւոյ . . .» եւն.։ Վջ.՝ «. . . եւ վայելելով ի բերկրութեան անձին քոյ յիշեսցես եւ զտառապեալ թարգմանս սորա՝ զԿոստանդնուպօլսեցի զՏայի Սիմոնեան զԱթանաս վարդապետս եւ թարմատար եպիսկոպոսս»։

2. *Թ. 6ա—բ՝ «Հրահանգ իմաստասիրաց ոտանաւորիւ ասացեալ Սոփեստ բանից Սենեքայի, | Մատո սիրով զականջ սրտի, | լուր հանճարեղ նորին բանի . . .» եւն.։ Վջ.՝ «Զի չնորհեաց զայս մեծ բարին | լինել ի մէջ Հայոց ազգի, | որով եւ իսկ հրահանգի | Եւ նմա փառս մեր առաքի»։*

3. *Թ. 7ա—381ա՝ «Պատմութիւն Յովսէպոսի Փլափիանոսի, առն մեծի գիտնականի եւ հմտագունի հնոյն կտակարանաց եւ բանիբուն վի|պասանի մինչեւ ի կայսերութիւնն Ներոնի։ Սկ.՝ «Գիրք առաջին, Որ պարունակէ զժամանակս երեք հազար ութ հարիւր երեսուն եւ ՟գ ամաց։ Յաղագս ստեղծման աշխարհի եւ Ադամայ եւ Եւայի եւ անհնազանդութեան նոցին եւ յաղագս արտաքսման նոցա յադինական դրախտէն։ Գլուխ նախորդ։ Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկին [= զերկիր], սակայն օրն ոչ էր յայտ, քանզի ի խորին խաւարէ ծածկեալ էր, այլ Հոգի Աստուծոյ շրջեր ի վերայ ջուրց . . .» եւն.։ Վջ.՝ «. . . որ է երեքտասներորդ ամ իշխանութեանն Դոմիդիանոսի կայսեր եւ իմոյ ծննդեանն ՟ծզ։ Առաջ դրեցի նաեւ գրել առ ձեզ զմերոյս Հրէիցս ի ՟դ մագեանս եւ ես զԱստուծոյ եւ էութենէ նորին եւ զորինաց, յորոց է մեզ ինչ չնորհեալ առնել եւ ինչ արգելեալ։ Վախճան քսաներորդ գրքոյն»։*

4. *Թ. 381բ—387ա՝ Ցանկ։ Վնգ.՝ «Ցանկ բոլոր գործոց Յովսե|պոսի Փլափիանոսի»։ Սկ.՝ «Գիրք առաջին։ Յաղագս ստեղծման Հի [= աշխարհի] . . .» եւն.։ Վջ.՝ «Եւ յաղագս դա|տաւորութեանն Փլորոսի։ Վերջ ցանկի քսան մատենից Յովսեպոսի Եբրայեցւոյն»։*

* * *

ՀԱՄԱՐ 12.

